

## ՍԴՅԿ ԿԵԴՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՅՈՎԻԿԱԲՐԱՅԱՍԵԱՆԻ ՀԵՏ

Երեւանի մէջ Հինգշաբթի 27 Նոյեմբերին տեղի ունեցաւ տեսակցութիւն՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյին միջեւ, վերջինիս Ք. Միքայէլեան կեդրոնին մէջ: Ժողովին ներկայ գտնուեցան ՍԴՅԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանն ու փոխ ատենապետ՝ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանը, իսկ ՀՅԴ Բիւրոյին կողմէ ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը եւ անդամ Լեւոն Մկրտչեանը: Տեսակցութեան ընթացքին վերստին գնահատուեցաւ երկու կուսակցութիւններուն միջեւ առկայ համագործակցութիւնը, շեշտուեցաւ Հայրենիք Սփիւռք շարքերութիւններու առաւել սերտացման անհրաժեշտութիւնը եւ այդ հարցին մէջ երկու կուսակցութիւններու դերակատարութեան կարեւորութիւնը: Կողմերը անդրադարձան Հայաստանի Հանրապետութեան

առջեւ ծառայած ներքին եւ արտաքին մարտահրաւէրներուն, այդ ուղղութեամբ անհրաժեշտ աշխատանքներուն: Վերստին ընդգծուեցաւ նորանկախ Հայաստանի մէջ գաղափարական կուսակցութիւններուն դերը: Կողմերը պայմանաւորուեցան ազգային ու համահայկական նշանակութեան ինդիւրներուն մասին յետագայ հանդիպումներ կայացնելու եւ համագործակցելու կարեւորութեան շուրջ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւնը մը Ուրբաթ, 28 Նոյեմբերին տեսակցեցաւ Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանի հետ: Պատուիրակութեան մաս կազմեցին Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան, փոխ ատենապետ պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ վարչութեան անդամ

Շար.ք էջ 5

## «Հայաստան» Հիմնդրամի Թելեթոնին Առթիւ Հանգանակուեցաւ 12.4 Միլիոն Տոլար

Հինգշաբթի, Նոյեմբեր 27-ին Լոս Անճելըսի մէջ կայացած «Հայաստան» համահայկական հիմնադրամի 17-րդ թելեթոնին առթիւ, աշխարհի տարբեր երկիրներուն մէջ հանգանակուած գումարը հասաւ 12 միլիոն 399 հազար 550 տոլարի: Այս հաւաքուած գումարը պիտի ծառայէ Հայաստանը եւ Լեւոնային Ղարաբաղը գիրար կապող շուրջ 116 քիլոմետր երկարութեամբ վարդենիս - Մարտակերտ ճանապարհի ասֆալտապատման ու շարժարման, ինչպէս նաեւ տարբեր բարեարարներու կողմէ ընտրուած յատուկ ծրագրերին: Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ:

Նախորդ տարի «Հայաստան» հիմնադրամի 16-րդ թելեթոնի առթիւ արձանագրուած էր աւելի քան 22,5 միլիոն տոլարի նուիրատուութեան խոստում: Այդ առթիւ բաւական մեծ գումար նուիրած

էին Ռուսաստանի մեծահարուստ հայ գործարարները, որոնք այս տարի կը բացակայէին:

Թելեթոնին իրենց մասնակցութիւնը բերելու համար Լոս Անճելըս ժամանած էին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան, Արցախի Թեմի առաջնորդ՝ Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Ուաշինկթընի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ դեսան եւ նախկին վարչապետ Տիգրան Մարգսեան եւ ուրիշներ:

Թելեթոնը կը սփռուէր Միացեալ Նահանգներու տարածքին ամերիկեան եւ հայկական ալիքներով, իսկ Հայաստանի եւ այլ երկիրներու մէջ հայութիւնը առիթ ունեցաւ դիտելու եւ մասնակցելու նուիրահաւաքին՝ Հայաստանի Հանրային հեռատեսիլին միջոցաւ:

## ԱՐՑԱՒԻ ՆԱԽԱԳԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ Ս.Դ.Հ.Կ. ՎԱՐՉ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՄԸ

## ՀԱՄ-Ի ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵՒԱԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՐԳԵՒՍՐՈՒԵՑԱՒ ԱՐՑԱՒԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ ԿՈՂՄԵ

Չորեքշաբթի, Նոյեմբեր 26-ին, ՀՀ Լոս Անճելըսի հիւպատոսարանէն ներս տեղի ունեցած յատուկ արարողութեան մը ընթացքին, խումբ մը հայ եւ օտար քաղաքական գործիչներ արժանացան պարգևատրման՝ Արցախի Հանրապետութեան իրենց մատուցած ծառայութիւններուն համար:

Քալիֆորնիա նահանգին կողմէ Արցախի անկախութեան ճանաչման գծով իրենց տարած աշխատանքներուն համար ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանի ձեռամբ «Երախտագիտութեան» մետալով պարգևատրուողներու շարքին էր ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատրեանը:

Նոյն մետալին արժանացան նաեւ Քալիֆորնիա նահանգի Նահանգային Խորհրդարանի անդամներ՝ Մայք Կաթօ, որ Բանաձեւի հեղինակն էր, Խաչօ Աշճեան, Շէրըլ Պրաուն, Ատրին Նազարեան, Լոս Անճելըսի Քաղաքապետական Խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան եւ ուրիշներ:

Այս առթիւ, Ուաշինկթոնի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դես-



Բակո Սահակեան կը պարգևատրէ ՀԱԽ առեւտրային Սեւակ Խաչատրեանը

պան Տիգրան Մարգսեան Հայաստանի նախագահ Մերժ Մարգսեանի անունով «Միթար Գոշ» մետալով պարգևատրեց Քալիֆորնիոյ Խորհրդարանի շարք մը անդամները, իսկ նախագահ Բակո Սահակեան նոյն մետալը յանձնեց ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի ատենապետ Վիգէն Յովսէփեանին:

«Միթար Գոշ» մետալը, անցեալ շաբաթ նախագահ Մարգսեանի ձեռամբ յանձնուած էր նաեւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Վազգէն Գալթազեանին:



Նախագահ Սահակեան, դեսպան Մարգսեան եւ հիւպատոս Մարգիսով ՍԴՀԿ պատուիրակութեան հետ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարչի Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը Նոյեմբերի 26ին, 2014, Կլենտէյլի Հիլթըն պանդոկին մէջ հանդիպում մը ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի հետ: Վսեմաշուք նախագահին կ'ընկերակցէին ԱՄՆ-ի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ լիազօր դեսպան Տիգրան Մարգիսեան, Լոս Անճելըսի Հայաստանի զլխաւոր հիւպատոս Սերգէյ Սարգիսով, ԱՄՆ-ի եւ Գանատայի մէջ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշտական ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ: Ս.Դ. Հնչակեան պատուիրակութիւնը կը գլխաւորէր ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան, մասնակցութեամբ վարդան Քէօրօղլեանի, Վահէ Աջապահեանի, Կարինէ Տէփոյեանի եւ Սու-

րէն Խուտանեանի: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականութեան, Արցախ-Սփիւռք կապերու ամրապնդման հարթութիւններուն վրայ աւելցնելով որ Արցախը շահագրգռուած է հետեւողաբար շարունակելու եւ խորացնելու այս փոխ գործակցութիւնը միաժամանակ շեշտը դնելով արդիւնաբերութեան զարգացման եւ տնտեսական ներդրումներու անհրաժեշտութեան վրայ:

Բակո Սահակեան առանձնապէս շնորհակալութիւն յայտնեց Ս.Դ.Հ.Կ.ի հովանաւորութեան ներքեւ գործող Հայ-Ամերիկեան Խորհուրդին, որուն արդիւնաւէտ ձեռքերուն եւ գործակցութեան շնորհիւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը պաշտօնական ճանաչում ստացաւ Քալիֆորնիոյ Նահանգային կառավարութեան կողմէ:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սադրանք հայկական բանակի դեմ

ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Facebook-ում յայտնուել է էջ, որը պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանին «հռչակում» է 2018 թուականի նախագահ: Պաշտպանութեան նախարարութիւնն ու Սէյրան Օհանեանն էջի հետ կապ չունեն: Թէ ով ունի՝ պարզ չէ: Պարզ է մի բան, որ սոցցանցում այդօրինակ «վեկտորով» յայտնուած էջը սադրանք է թէ Օհանեանի, թէ առաջին հերթին հայկական բանակի դէմ:

Ընդ որում, հետաքրքիր է, որ սոցցանցում էջը յայտնուել է նախօրէին Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի գրեթէ սենսացիոն յայտարարութիւնից չետոյ, որում նա նշում էր, թէ իրեն հիացրել է հայկական խոցուած ուղղաթիռի երեք զոհերի աճիւնները դուրս բերելու վերաբերեալ Սէյրան Օհանեանի մտահոգութիւնը, այդ ինչի վրայ կենտրոնացուածութիւնն ու ինչի վրա լուծելու կարողութիւնը:

Ահա այդ յայտարարութիւնից չետոյ սոցցանցում յայտնուել է Սէյրան Օհանեանին 2018 թուականին նախագահ տեսնող էջը կամ սադրանքը, որն առաջին հերթին սադրանք է իհարկէ հայկական զինուժի դէմ, որն իհարկէ ողբերգական առիթով, բայց արձանագրել է սպաւորիչ ու որակապէս նոր մակարդակի գործողութիւնների կարողութիւն, արժանանալով թիւ մէկ գերտէրութեան բարձր գնահատականին:

Փաստացի, ֆէյսբուքեան էջով, թէ գնահատականը, թէ զինուժի ձեռքբերումը բերուած եւ հանգեցուած է ընդամէնը նախընտրական ներ քաղաքական ինչի ներքին, դրանով վարկաբեկելով այն գործընթացը, որ ծաւալել է զինուժը վերջին ամիսներին՝ դառնալով Հայաստանի Հանրապետութեան պետական կառավարման այն եզակի օղակը, որը կանգնած է Հայաստանի անվտանգութեան եւ ինքնիշխանութեան դիրքում եւ դժուարին ու բարդ պայմաններում պաշտպանում է դրանք:

Այդ առաքելութեան շնորհիւ զինուժը դուրս է եկել լիովին նոր դիրքեր՝ թէ տարածաշրջանում, թէ աշխարհաքաղաքական գործընթացում, թէ ներհասարակական քաղաքական համայնապատկերում: Հայաստանի զինուժը ուժերը վերջին մի քանի ամիսներին ցուցաբերել են աշխարհաքաղաքական գործընթացների եւ մարտահրաշխանների հանդէպ աղեկվատութիւն եւ ինչի ներքին լուծելու գործնական կարողութիւն:

Փաստացի, զինուժը ուժերը վերածուել են Հայաստանի անվտանգութեան, ինքնիշխանութեան ու անկախութեան «կղզեակի»՝ ամէն ինչ յանձնելու պատրաստակամութիւն յայտնած եւ համերաշխօրէն յանձնած քաղաքական դասի ֆոնին: Բանակի գործողութիւնները ձեւաւորել են հասարակական աղեկվատ տրամադրութեան ձեւաւորման բազային միջավայր, որը տալիս է Հայաստանի ինքնիշխանութեան, միջազգային սուբեկտիւթեան, աշխարհաքաղաքական գործընկերային վարկի վերականգնմանն ուղղուած աշխատանքի հնարաւորութիւն:

Միեւնոյն ժամանակ, զինուժն ինքը բոլորովին գերծ չէ այն ինչի ներքին ու «որակներից», որոնք հանդիսացել են Հա-

յաստանի ինքնիշխանութեան կորստի պատճառ, անկախութեան կորստի բերող գործընթացի պատճառ ու հետեւանք: Բայց, դրանով հանդերձ, հենց զինուժը ուժերը ցուցաբերեցին վճռորոշ ժամանակաշրջանում աղեկվատութեան, որոշումների կայացման եւ գործողութիւնների իրականացման միտում եւ կամք:

Ճահճային արեալից դուրս գալը բխում է լոկ այն սուբեկտիւթեանի շահից, որոնց համար առաջնահերթութիւն է Հայաստանի անկախութիւնը, ինքնիշխանութիւնը, անվտանգութիւնը, Հայաստանի սուբեկտիւթիւնը աշխարհաքաղաքական գործընթացներում, Հայաստանի գործընկերային վարկը եւ տեղն ու դերը համաշխարհային անվտանգութեան համակարգում՝ մասնաւորապէս դրա առաջատար եւրատլանտեան քաղաքակրթական բեւեռում:

Իսկ ում համար Հայաստանի ինքնիշխանութիւնը քաղաքական կորպորատիւ շահերի մանրադրամ է, զինուժը ուժերի յաջողութիւնը դառնում է «քաղաքական հակառակորդ», ինչն էլ առաջ է բերում այդ իրավիճակը ֆորմալացնելու անհրաժեշտութիւն: Ֆէյսբուքեան էջը դրան ուղղուած սադրիչ քայլերից մէկն է, որի հետեւանքը կը լինի հանրային գիտակցումը, թէ զինուժը ուժերի գործողութիւններն ու դրա շուրջ ամբողջ քննարկումներն ու գնահատականները լուծում են ընդամէնը 2018 թուականի նախագահի ընտրութեանն իշխանութեան ժառանգորդի հարց:

Այդպիսով, զինուժը ուժերի առաքելութիւնը հասցւում է ընդամէնը նախընտրական, ներքաղաքական ինտրիզներ մակարդակի, ինչը բնականաբար հանրային գիտակցութեան մէջ արժեզրկում է զինուժի այն դերը, որը փայլուն պրոֆեսիոնալիզմով իրականացւում է վերջին ամիսներին:

Չի բացառում, որ Սէյրան Օհանեանը մտածում է նախագահ դառնալու մասին, չի բացառում նաեւ, որ զինուժի գործողութիւններն ու դերակատարութեան ընդհուպ միջազգային մակարդակի աճը ներքաղաքական ինտրիզների կամ Հայաստանի վասալացման ու կապիտուլիացիայի հարցում շահագրգռուած արտաքին կենտրոնների մօտ համոզում է առաջացրել, որ Օհանեանը դառնում է 2018-ի յաւակնորդ: Բացառուած չէ, որ այդպէս է մտածում ոչ թէ վասալացման եւ կապիտուլիացիայի արտաքին կենտրոնը, այլ ընդամէնը 2018-ի ներհամակարգային միջ աշխարհում ու յայտնի յաւակնորդները, որոնք էլ փորձում են լուծել իրենց հնարաւոր մրցակցի հարցը:

Այդ ամէնը սակայն բացարձակապէս մանրուք են այն ինչի ներքին համեմատ, որ լուծել է զինուժը վերջին ամիսներին, եւ այն պատասխանատուութեան համեմատ, որ զինուժը ուժերն այդ յաջողութիւններով ստանձնել են պետական քաղաքականութեան համատեքստում: Մանր մտահոգութիւնները հանդիսանում են զինուժի ուղղուած հարուած եւ հայկական բանակն անուղղակիօրէն, հանրային գիտակցութեան մէջ փաստացի դարձնում են ընդամէնը ներքաղաքական մանր ինտրիզների գործիք, հարուածելով բանակին թիկունքից:

«ԼՐԱԳԻՐ»

Ո՞վ եւ ինչու է շեղուել

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Ոչ իշխանական դաշտում սալիուտը նորից ներսից է խփում: Որքան էլ այդ դաշտում առաջնորդողի ցուպը ստանձնած ոչ իշխանական եռեակից հաւաստիացնեն, թէ իրենց մօտ ամէն բան նորմալ է եւ ամբողջ ուժերով մղուել են համաժողովրդական շարժումը աւարտին հասցնելու գործին, իրադարձութիւններն ու փաստերն այլնի մասին են խօսում: Լրացաւ Սերժ Սարգսեանին իմպիւզմենտ ներկայացնելու ՀԱԿ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի՝ Աժ արտահերթ նիստ հրաւիրելու նպատակով քարտուղարութիւնից վերցրած ձեւաթղթի ժամկէտը, բայց դրա տակ իրենց ստորագրութիւնները դրեցին ընդամէնը երեք պատգամաւորներ՝ նախագծի հեղինակը, Ալեքսանդր Արզումանեանը եւ Զարուհի Փոստանշեանը: Մինչդեռ իսկզբանէ այս նախաձեռնութիւնը քաղաքական եւ քաղաքագիտական շրջանակներում որակուել էր իբրեւ լիւստրացիա, որը ցոյց է տալու, թէ ոչ իշխանական դաշտում ով ով է: Նախաձեռնութեանը չմիանալու հակափաստարկները նախագիծը թերի հիմնաւորուածութեան եւ տեխնիկական անհնարինութեան վերաբերեալ էին, սակայն Փաշինեանը դրանք հիմնաւոր արդարացումներ չի համարում: Արդեօք իր նախաձեռնութեամբ ինքը ցանկանում էր բացալալու ոչ իշխանական եռեակի իշխանափոխութիւն անելու անկեղծութիւնը, Նիկոլ Փաշինեանը պատասխանեց, որ աշխարհային զարգացումների կոնտեքստում յայտարարում էր, որ եռեակը պատրաստուած է շուտափոյթ եւ ամբողջական իշխանափոխութիւն իրականացնել, եւ իր նախաձեռնութիւնը իրեն հնարաւորութիւն տուեց բացալալու այդ յայտարարութիւնների իրական արժէքը: Հարցին՝ համամիտ էք Արտաշէս Գեղամեանի այն դիտարկմանը, որ այս նախաձեռնութիւնը ապացուցեց, որ Սերժ Սարգսեանը վայելում է խորհրդարանի մեծամասնութեան լիակատար աջակցութիւնը, Ն. Փաշինեանը պատասխանեց, որ այն քաղաքական ուժերը, որոնք համամիտ չեն Գեղամեանի այդ յայտարարութեան հետ, հնարաւորութիւն ունէին միանալու իր նախաձեռնութեանը: Յիշեցնեք, որ Գեղամեանը նման յայտարարութիւն արեց նիստի մեկնարկին, երբ Փաշինեանը հերթական անգամ կոչ էր անում գործընկերներին միանալ նախաձեռնութեանը: Անդրադառնալով ՀԱԿ-ի՝ իր նախաձեռնութեան չմիանալու պարզաբանմանը, թէ այդ նախաձեռնութիւնն իրատեսական չէ, Նիկոլ Փաշինեանը նախ չթաքցրեց վրդովմունքը, որ ինքը ցանկութիւն չունի քննարկել մի մարդու յայտարարութիւն, որին երբեք էլ չի տեսել իմ բակցութեան նիստերին: Յիշեք, որ այդ յայտարարութիւնը «Հայ Ազգային կոնգրես» իմ բակցութեան փորձագէտ եւ մամուլի հետ կապերի պատասխանատու Արմէն Խաչատրեանի անունից է:

Փաշինեանը շարունակելով ասաց, որ այս ընթացքում ՀԱԿ-ը հանդէպ է եկել բազմաթիւ ծրագրային նախաձեռնութիւններով՝ իսկզբանէ իմանալով, որ այն Աժ-ում տապալուելու է: Նա յիշատակեց Մարտի 1-ի դէպքերն ուսումնասիրով յանձնաժողով ստեղծելու

ՀԱԿ նախաձեռնութիւնը, որը ՀԱԿ-ը՝ իմանալով, որ տապալուելու է, այնուամենայնիւ երկու անգամ ներկայացրել է Աժ, քանի որ դա ՀԱԿ-ի ծրագրային դրոյթներից էր: Ն. Փաշինեանն ընդգծեց, որ Սերժ Սարգսեանի պաշտօնանկութիւնն ու իշխանափոխութիւնը նոյնպէս ՀԱԿ ծրագրային դրոյթներից է եղել, որից, սակայն, ՀԱԿ-ն այսօր շեղուել է:

Փաշինեանը պատրաստուած է առաջիկայում այն դարձնել օրէնքի համապատասխան նախագիծ, որը ենթադրում է, որ կը քննարկուի Աժ համապատասխան յանձնաժողովում, ապա՝ Աժ լիագումար նիստում:

Եռեակի անյարմար վիճակներն այսօր չի աւարտուում, այսօր նաեւ Բաֆֆի Յովհաննիսեանն առիթը բաց չի թողել հերթական անգամ սիրտը դատարկելու եւ ցոյց տալու, որ եռեակը նախաձեռնութիւնը ժամանակներ չի ապրում: Նա նորից սրտնեղել է, որ եռեակը պէտք է ժողովրդի առջև յուշագիր ստորագրի եւ տա շարժման իրական անունը, դրա նպատակը, որոնք են այդ նպատակն իրացնելու միջոցներն ու որոշումներ կայացնել: «Ահագին գործ արուել է, փոխգիշում եղել է, հարթակից յայտարարուել է շարժման, գրասենեակների մասին, բայց միանշանակ եւ միաձայն նպատակի եւ միջոցների մասին չի յայտարարուել: Չի կարելի ժողովրդին բերել եւ հերթական անգամ արձակուրդ ուղարկել, մեր ժողովուրդը պէտք է իմանայ, թէ ուր է գնում այս ամէն ինչը», - ասել է Բաֆֆի Յովհաննիսեանը: «ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$80.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նախախորհրդարանը» Անհրաժեշտութեան Դեպքում Կը Դիմի Զինուած Պայքարի

«Նախախորհրդարանը» չնայած որդեգրել է խաղաղ պայքարի ճանապարհը, սակայն իշխանութեան կողմից շարունակական ուժային մեթոդների կիրառման դեպքում կ'անցնի զինուած պայքարի: Այս մասին Դեկտեմբերի 3-ին, լրագրողներին յայտնեց «Նախախորհրդարանի» անդամ Գէորգ Սաֆարեանը:

«Եթէ մենք համարենք, որ մեր երկրում այլևս խաղաղ պայքարով հնարաւոր չէ հարցի լուծման համար, ապա կ'ընդվզենք եւ կը դիմենք ուժային պայքարի միջոցների: Այսօր մեր երկրում կան հարիւրաւոր երիտասարդներ, ովքեր ցանկացած պահի պատրաստ են գէնք վերցնելու: Այսօր մեր ձեռքը գնում է գէնքին, բայց նաեւ լսելով մեր աւագ սերնդի յորդորները, կոչերը, մենք զինեալ պայքար չենք սկսելու: Որպէսզի սա չլինի, ես զգուշացնում եմ ռեժիմին. Ապրիլի 24-ին ռեժիմը հեռացուելու է, ցանկացած ձեռով, մի դրոշմ մեզ գնալ կուպիտ գործողութիւնների», - ասաց Գէորգ Սաֆարեանը:

Գէորգ Սաֆարեանը, որի նկատմամբ յարձակում էր կատարուել նոյեմբերի 27-ի երեկոյան, յոյս չունի, որ ոստիկանութիւնը կը բացայայտի մեղաւորներին. «Եթէ ոստիկանութիւնն ուզեր,

հիմա արդէն մարդիկ ձերբակալուած կը լինէին»:

«Նախախորհրդարանի» քարտուղարու թեան համակարգող Ժիրայր Սեֆիւեանը նշեց, որ համակարգից իրենք յոյս չունեն, եւ առանձին քննութիւն են անցկացնելու. «Այդ ամբողջը կը բացայայտուի ռեժիմի տապալումից օրեր անց, 20 տարուայ ամբողջ ռեպրեսիան ջրի երես է գալու»:

«Նախախորհրդարանի» անդամ Գարեգին Չուգասեանի խօսքով՝ «100-ամեակն առանց ռեժիմի» շարժման նկատմամբ վերջին շրջանի ոտնձգութիւնները նպատակ ունեն վախեցնել շարժման մասնակիցներին:

«Զարմանալի է, որ այսքան շուտ ռեժիմը անցաւ ուժային մեթոդներով ճնշումների: Իրենց նպատակը հենց Ապրիլի 24-ը տեղաշարժելն է, այսինքն մեզ հրահրել, ստիպել ըմբոստանալ, ոչ թէ Ապրիլի 24-ին այլ աւելի շուտ, մենք այդ սարգանքին չենք տրուած: Մենք մաքսիմում զսպասուած ենք լինելու եւ շարունակելու ենք մեր այս մարտավարութիւնը», - ասաց Գարեգին Չուգասեանը:

Ըստ նրա՝ իրենց նկատմամբ իրականացուած «անհրաժեշտութեան գործողութիւնները» լրջօրէն նպատակ են իրենց քարոզչական աշխատանքներին:

Զուրաբեանը Պահանջում է Ազատ Եւ Արդար Ընտրութիւններ

Իշխանութիւնները կամ կամ մովի կտան ՀՀ ժողովրդին ազատ եւ արդար ընտրութիւններ, կամ ժողովուրդն ազատ եւ արդար ընտրութիւնները կը նուաճի: Այս մասին Ազգային ժողովում «Ընտրական օրէնսգրքում» փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին օրէնքի քննարկման ժամանակ յայտարարել է ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ յաւելելով, որ եթէ Հայաստանում լինեն ազատ եւ արդար ընտրութիւններ, ապա կ'ունենայինք ժողովրդի առաջ հաշուետու իշխանութիւն, Աժ

պատգամաւորների մեծամասնութիւն, որոնք վստահ կը լինեն, որ իրենց թիկունքում կանգնած է ժողովուրդը:

Նրա խօսքով՝ եթէ ընտրութիւններն արդար լինէին, ապա ՀՀԿ-ն խորհրդարանում 3 անգամ քիչ պատգամաւոր կ'ունենար:

«Տուէք մեզ ազատ եւ արդար ընտրութիւններ՝ մենք կը տանենք Հայաստանը զարգացում, բարգաւաճում, կ'ապահովենք տնտեսութեան եւ արդիւնաբերութեան զարգացում», - ընդգծել է Զուրաբեանը, յաւելելով, որ դրա համար իշխանութիւնը չունի քաղաքական կամք:

«Առանց Որեւէ Նախաձեռնութեան Ել Պարզ Ե՝ Ովքեր Են Կեղծ Ընդդիմադիրները»

Ոչ իշխանականներին կամ կեղծ ընդդիմադիրներին նման նախաձեռնութեամբ բացայայտելու կարիք չկայ, առանց դրա էլ յայտնի են, թէ ովքեր են նրանք: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց քաղաքական վերլուծաբան Ադասի Ենքեանը՝ անդրադառնալով Նիկոլ Փաշինեանի՝ նախագահի իմպիչմենտի վերաբերեալ նախաձեռնութեանը:

Միեւնոյն ժամանակ, վերլուծաբանն ասաց, որ այժմ այդ նախաձեռնութիւնը յաջողութիւն չի ունենում, բայց այնպէս էլ չէ, որ քաղաքական որեւէ նախաձեռնութիւն, որեւէ յայտարարութիւն միանգամից յաջողութիւն է ունենում: «Ես չգիտեմ՝ գուցէ որոշակի ստրատեգիա կայ դրա տակ, թէ ինչ պէտք է արուի: Եթէ դա այդպէս է, ապա չեմ բացառում, որ սա յաջող քայլ է: Եթէ ոչ, սա ուղղակի ինքնանպատակ է, դէմարշ, եթէ յետապահ ստրատեգիա չկայ, ուրեմն ինքը աննպատակ է, դեկլարատիւ քայլ», - ասաց վերլուծաբանը:

Ադասի Ենքեանի կարծիքով՝



Քաղաքական վերլուծաբան Ադասի Ենքեան

այս քաղաքական քայլը կարող է ունենալ ամենատարբեր նպատակներ, ոչ իշխանականների դրան չմիանալը ցոյց է տալիս, որ նրանք այդ դիրքորոշումը չունեն, նախագահի իմպիչմենտի հարցը նրանց օրակարգում չկայ:

Նշենք, որ Նիկոլ Փաշինեանի նախաձեռնութեան տակ ստորագրել են միայն Զարուհի Փոստանյանը եւ Ալեքսանդր Արզումանեանը, այսինչ օրակարգում ընդգրկելու համար անհրաժեշտ էր 44 պատգամաւորի ստորագրութիւն:

«Աւարտուեց Քաղաքական Աշունը, Որն Այդպէս Ել Զթեժացաւ» Շարմազանով

Եւրասիական Տնտեսական Միութեանն անդամակցելը դրական է եւ բխում է մեր պետութեան շահերից: Այդ մասին խորհրդարանում յայտարարութիւնների ժամին ասել է Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

«Աւարտուեց հերթական քաղաքական աշունը, որը նախորդ աշուններից առանձնապէս չտարբերուեց եւ այդպէս էլ չթեժացաւ: Ինչպէս ասում են, իշխանութիւններն աշխատում են, ընդդիմութիւնը՝ քննադատում, երբեմն էլ՝ անհարկի աղմուկ: Իշխանութիւնների օրակարգը ամբողջական է եւ միտուած է բարեփոխումների միջոցով երկրի զարգացմանը: Ի տարբերութիւն իշխանութիւնների՝ քաղաքական որոշ ուժեր այդպէս էլ չձեւաւորեցին թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քաղաքական միասնական օրակարգ», - ասել է նա:

Անդրադառնալով ԵՏՄ-ին՝ Շարմազանովը նկատել է. «Հայոց խորհրդարանում երէկ մեկնարկեց Եւրասիական Տնտեսական Միութեանը Հայաստանի անդամակցման պայմանագրին հաւանութիւն տալու հարցի քննարկումը: Մեր համոզմամբ՝ այդ միութեանն անդամակցելը դրական է եւ բխում է մեր պետութեան շահերից:

Աւելին՝ թէ՛ որոշ ընդդիմադիր առաջնորդները հրապարակային յայտարարութիւնները, թէ՛ գլխադասային յանձնաժողովում հարցի քննարկումներն ու քուէարկութիւնը ցոյց տուեցին, որ խորհրդարանում առկայ քաղաքական ուժերի մեծամասնութիւնը կողմ է իշխանութիւնների այս որոշմանը, այդ թուում նաեւ այն ուժերը, որոնց ներկայացուցիչները 2013 թուականի Սեպտեմբերի 3-ից յետոյ իրար հերթ չտալով փորձում էին քննադատել մեզ: Հետեւութիւնը մէկն է՝ այսօր



Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

նրանք էլ իրենց քաղաքական վարքագծով ապացուցեցին, որ Նախագահ Սարգսեանի գլխաւորութեամբ իշխանութիւնների որոշումը անդամակցելու Եւրասիական Տնտեսական Միութեանը բխում է մեր պետական շահերից եւ արուել է ճիշդ ժամանակին»:

Շարմազանովը նաեւ անդրադարձել է հայ-թուրքական յարաբերութիւններին: «Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ թուրքիայից հնչող ազդակները գալիս են ապացուցելու, որ թուրքիան շարունակում է իտոտականութեան քաղաքականութիւնը: Դրա վկայութիւնն է թուրքիայի արագորձնախարար Մելլուք Չավուշօղլուի վերջերս արուած յայտարարութիւնը, համաձայն որի՝ թուրքիան խոչընդոտելու է Յեղասպանութեան ճանաչման գործընթացը:

Չնայած նրանց գործադրած ջանքերին՝ այնուհանդերձ կան եւ կը լինեն երկրներ, որոնք հանդիսանում են մարդու իրաւունքների պաշտպանութեան իրական ջատագովներ: Վառ ապացոյցը Բոլիվիան է, որի խորհրդարանի զոյգ պալատների կողմից նախօրէին միաձայն դատապարտուեց Հայոց ցեղասպանութիւնը եւ այն ժխտող քաղաքականութիւնը:

«Ծառուկեանն Իր Յարաբերութիւնները Չի Փչացնի Քոչարեանի Հետ» Զուրաբեան

ՀՀԾ կուսակցութեան նախագահ Արարատ Զուրաբեանը համոզուած է, որ եթէ լարուածութիւն չառաջանայ իշխանութեան եւ խորհրդարանական ոչ իշխանական երեք ուժերի՝ ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի եւ «Ժառանգութեան» միջեւ, ապա բնակցութիւնների սեղանին կը նստեն Սերժ Սարգսեանը եւ Ռոբերտ Քոչարեանը: Դեկտեմբերի 2-ին, լրագրողների հետ զրոյցում Զուրաբեանը նշեց, որ չի բացառում, որ հենց եռեակի հետեւում Հայաստանի երկրորդ նախագահն է:

«Եռեակն ու իշխանութիւնները պայմանաւորուածութիւն ձեռք կը բերեն, կիսեն իշխանութիւնը, չափաբաժնի հարց է այստեղ ընդամէնը: Եռեակում մի ստուար զանգուած մոլորութեան մէջ է, որովհետեւ այս ճանապարհով զնայլը տանում է ոչնչացման», - ասաց Զուրաբեանը:

Կուսակցութեան նախագահի խօսքով՝ եռեակում երաժշտութիւն պատուիրողը ԲՀԿ-ն է, որն էլ իրաւունք ունի որոշել, թէ նախագահի թեկնածու ում կ'առաջադրի: «Գազիկ Ծառուկեանը պատուախնդիր մարդ է եւ իր յարաբերութիւնները չի փչացնի Ռոբերտ Քոչարեանի հետ», - աւելացրեց նա:

Արարատ Զուրաբեանի կարծիքով Հայաստանի գործող իշխանութիւնը խաղում է խորհրդարան



ՀՀԾ կուսակցութեան նախագահ Արարատ Զուրաբեան

նական ուժերի հետ: «Համամասնական ընտրակարգին մեր իշխանութիւնները մշտապէս դէմ են եղել, որովհետեւ իշխանութիւնը վերարտադրելու համար ընդունելի տարբերակ է ունենալ ընտրատարածքներ, օգտագործել ունեցած ամբողջ ֆինանսական միջոցները եւ իր ընտրած պատգամաւորներին անցկացնել խորհրդարան: Իշխանութիւնն այս պահին ունի մի խնդիր՝ Սահմանադրական փոփոխութիւններն անցկացնել եւ փորձում է ստեղծել բանակցային միջոցներ խորհրդարանական ուժերի հետ, սակայն ինքն անում է այնպէս, ինչպէս ուզում է», - ասաց Արարատ Զուրաբեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Ռոբերտ Ֆիսկ

### Հայերի եւ հրեաների ցեղասպանութիւնների միջեւ տարբերութիւն դնելը ռասիզմ է

Բրիտանացի լրագրող Ռոբերտ Ֆիսկը «The Independent»-ում հրատարակուած «Գիտէ՞ք, արդեօք, Հոլոքոստի եւ Հոլոքոստի միջեւ տարբերութիւնը: Հայերը գիտեն» վերնագրով յօդուածում կրկին անդրադարձել է Հայոց ցեղասպանութեան թեմային:



Յայտնի լրագրող Ռոբերտ Ֆիսկ

ուած էին: Նրանք ցանկանում էին իմանալ, թէ ինչո՞ւ իրենք արժանի չեն մեծատառ Հ-ի: Մի՞թէ թուրքերը մեծատառ Հ-ի համար բաւականաչափ հայերի չեն կոտորել», - գրում է լրագրողը:

Ֆիսկը գրել է իր խմբագիր Սիմոն Բոյլընըին՝ բացատրելով, որ տարբերութիւն է անցկացնում երկու ցեղասպանութիւնների միջեւ, ռասիստական մօտեցում, քանի որ չի կարելի տարբերութիւններ դնել 1.5 եւ 6 մլն թուրքի միջեւ: Բացի այդ, ինչպէս գրում է հեղինակը, իսրայէլցիները, ի տարբերութիւն իսրայէլի, որը նոյնիսկ հայերի ողբերգութիւնը չի ճանաչում որպէս ցեղասպանութիւն, հայկական ջարդն անուանում են «Հայկական Շոա»՝ օգտագործելով եբրայերէն հոլոքոստ բառը: Հետագայում խմբագիրը նամակը «The Independent»-ում հրատարակել է որպէս յօդուած, եւ այն մրցանակ է ստացել:

Իր յօդուածում Ֆիսկը պատմել է, թէ ինչպէս են խմբագիրները Հայոց ցեղասպանութեան մասին իր հրատարակումներում ուղղել Հոլոքոստ բառը՝ Հ մեծատառը փոխելով փոքրատառի:

«Դա եղել է անցեալ դարի առաջին ցեղասպանութիւնը, մինչդեռ երկրորդը դարձել է հրեաների Հոլոքոստը: Զանգուածային սպանութիւնների երկու ակտերն էլ ակնյայտօրէն պատմականօրէն կապուած են միմեանց: Թուրքերը հազարաւոր հայերի խեղդեցին քարայրներում՝ ծովի լայնքով փոսերի մէջ, որտեղ նրանք բանտարկել էին հայերին սիրիական անապատներում: Այդպիսով, ստեղծուել են առաջին գաղափարները», - գրում է Ֆիսկը:

Նրա խօսքով, Գերմանական կայսերական բանակի կրտսեր անդամները ցեղասպանութեան ժամանակ մարզուած էին թուրքական բանակում: Աւելին, այդ զինուորները Հիտլերի Վերմախտի շարքերում յայտնուեցին Ռւկրահայտում եւ Բեյառուսում, որտեղ նրանք օգնում էին հրեաների զանգուածային սպանութիւնները կազմակերպելու գործում: Կասկած չկայ, թէ որտեղ են նրանք սովորել այդ անել:

Ֆիսկը պատմել է, որ տարիներ առաջ ինքը «Հայերի Հոլոքոստ» արտայայտութիւնն օգտագործել է «The Independent»-ի Հղերում: Սրբագրիչն անմիջապէս մեծատառ Հ-ն փոխարինել է փոքրատառով: «Իմ հեռախօսանալիս անդադար գանգում էր: Հայերը վրդով-

### Կայացել է Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Միջգերատեսչական Նիստ



Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողովի հերթական նիստը

Դեկտեմբերի 2-ին ՀՀ սփիւռքի նախարարութիւնում կայացաւ Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը:

Սիրիահայերին առնչուող խնդիրների եւ ՀՀ արդարադատութեան նախարարութեան կողմից իրականացուած աշխատանքների մասին զեկուցումով հանդէս եկաւ ՀՀ արդարադատութեան նախարարի տեղակալ Արման Թաթոեանը: Նա ներկայացրեց նախարարութեան ձեռնարկած միջոցառումները եւ դրա հետ կապուած որոշակի խնդիրներ:

Նշուեց, որ 2012թ-ից սկսած սիրիահայերին առնչուող շուրջ երկու տասնեակի իրաւական ակտեր են ընդունուել: Յատկապէս կարեւորուեց պետական տուրքի մասին ՀՀ օրէնքում կատարուած փոփոխութիւնը եւ դրա հիման վրայ պետական տուրքի գծով արտօնութիւն սահմանելու մասին ՀՀ կառավարութեան որոշումը, որով պետական տուրքի վճարումից ազատուած են ազգութեամբ հայ այն օտարերկրացի քաղաքացիները, որոնց մշտական բնակութեան պետութիւնում ստեղծուել է իրենց կեանքին եւ առողջութեանը սպառնացող արտակարգ իրավիճակ:

Կարեւորուեց մաքսային օրէնսգրքում ժամանակաւոր մաք-

սային ռեժիմի արտօնութիւնների սահմանման հարցը: Ներկայացուեց նաեւ քաղաքացիական ակտերի գրանցման գործում նոր լուծումներ գտնելու հարցը:

ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը յատկապէս կարեւորեց սիրիահայերի ծննդեան վկայականների բացակայութեան դէպքում քաղաքացիութիւն ստանալու պարզեցմանը միտուած մի շարք փոփոխութիւնները, ինչպէս նաեւ առաջարկեց սիրիահայերի համար խորհրդատուական գրքոյկներ հրատարակել դասական ուղղագրութեամբ:

ՀՀ ֆինանսների նախարարութեան աշխատակազմի արտաքին տնտեսական գործունէութեան մոնիթորինգի եւ վիճակագրութեան վարչութեան պետ Կարէն Բեգլարեանը ներկայացրեց Սիրիայի, ինչպէս նաեւ արտակարգ իրավիճակներում գտնուող այլ երկրների հայերի՝ Հայաստանում հարկային եւ մաքսային ոլորտներին առնչուող հարցեր: Նշուեց, որ կառավարութեան որոշումներով սիրիահայերի կողմից Հայաստանի Հանրապետութիւն ներմուծուած տրանսպորտային միջոցները ազատուած են մաքսային վճարներից:

ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը նշեց, որ նույն մօտեցումը պէտք է ցուցաբերել Ռւկրահայտի ժամանած մեր հայրենակիցների համար:

### Ալիւր Հայաստանից Մեղադրել է Խաղաղութիւն Զուգելու Մէջ

«Ռոսիա-24» հեռուստակայանին իր նստավայրում տուած բացառիկ հարցազրույցում Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւեւն անդրադարձել է միջազգային հրատապ հարցերին, ռուս-ատրպէյճանական յարաբերութիւններին, եւ, իհարկէ, Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ատրպէյճանական հակամարտութեանը:

«Ինչ վերաբերում է դարաբաղեան կոնֆլիկտին, ապա այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, որ Հայաստանը խաղաղութիւն չի ուզում, այս հարցում առաջընթացի չի ձգտում եւ փորձում է պահպանել ստատուս-քվոն: Սա անընդունելի մօտեցում է, ինչի մասին Հայաստանին բազմիցս է հարողորուել», - ասել է Իլհամ Ալիւեւը:

Ինչպէս միշտ, նա չի շեղել է, որ այսօրուայ դրութեամբ կայ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի ընդունած չորս բանաձեւ, որոնք պահանջում են Հայաստանից ան-

յապաղ դուրս հանել գործը Լեռնային Ղարաբաղից, սակայն այդ բանաձեւերը Հայաստանի կողմից անտեսուած են:

Ատրպէյճանի ղեկավարն ասել է, որ այս տարին բանակցային գործընթացի առումով բաւական ակտիւ էր: Եւ ահա Փարիզի միջնորդութեամբ տեղի ունեցած քննարկումներից երկու շաբաթ անց Հայաստանը լայնածաւալ գորավարժութիւններ է անցկացրել:

«Ընդ որում, ոչ թէ Հայաստանի, ոչ թէ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (Ալիւեւի ձեւակերպումն է), այլ Ատրպէյճանի գրաւուած տարածքում՝ Աղդամի շրջանում: Արդեօք կա՞ր փարիզեան բաւական դրական հանդիպումից յետոյ այդ գորավարժութիւններն անցկացնելու, այդօրինակ աղդրի գործողութեան դիմելու անհրաժեշտութիւն», - հետորակաւ հարց է տուել Ալիւեւը «Ռոսիա-24»-ի թղթակցի հետ զրոյցում:

### Հայաստանի Բանկերը Վարկեր Եւ Առաջարկում Նոր Տարին Նշելու Համար

«Ներկայացրէք բունուս քարտ եւ ստացէք վարկային քարտ՝ արտօնեալ պայմաններով: Ամանորեայ ծախսերը այլեւս ինդիւր չեն»:

Սա այն հաղորդագրութիւնն է, որը վերջին օրերին հեռախօսներով ստանում են քաղաքացիները: 33 տոկոս աղքատութիւն ունեցող երկրում, որտեղ միջին աշխատավարձը 150 հազար դրամ է, Ամանորի շնորհի գրեթէ թուիչ քայլին գնած գրանցած հայաստանեան շուկայում, թուում է, թէ սա լաւագոյն տարբերակն է: Սպառողների իրաւունքների պաշտպանութեամբ զբաղող Բաբգէն Պիպոեանը համոզուած է, որ հայերը սիրում են ճոխ սեղանների առաջ դիմաորել Նոր տարին, բանկերն էլ հաշուի են առնում այդ փաստը:

«Առաջարկն էլ, իր հերթին, ծնուել է, որովհետեւ կայ այդ պահանջարկը, որը ազգային մեթոյախօսից է գալիս, որովհետեւ ամանորեայ սեղանը մեզ մօտ որոշակի մրցակցային բնոյթ է կրում», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Պիպոեանը:

Ամանորեայ գնումներն աստիճանաբար թեթեւանում են: Ֆինանսական խնդիրներ ունեցողները իրենց օտոնական սեղանները պցելու համար կարող են օգտուել հենց այս վարկային քարտից: Այն տրամադրուած է 50 հազարից սկսած

մինչեւ 2 միլիոն դրամի սահմաններում, 5 տարի ժամկետով, տարեկան 21 տոկոս տոկոսադրոյքով:

Տնտեսագէտ Բագրատ Ասատրեանը նշում է, որ անկախ գոյութիւն ունեցող սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ բանկերին կամ առեւտրային օբիեկտներին մեղադրելը սխալ է, նրանք աշխատում են՝ կիրառելով իրենց գործիքները:

«Առեւտրը անողը սոցիալական նպատակ չունի, նրա նպատակը արդիւնաւէտ բիզնեսը վարելն է, արդիւնաւէտութիւնը նշանակում է հնարաւորինս շատ եկամուտ ստանալ, ինչքան շատ եկամուտ ստացաւ էս տարի «Սիթին» («Երեւանի Սիթի» սուպերմարկետների ցանց), բանկը, որ էդ ծրագիրն անում է, էդքան մեր քաղաքացիներին վիճակը լաւ կը լինի: Եկէք չխառնենք», - ասաց Ասատրեանը:

Սպառողների իրաւունքների պաշտպանն էլ զգուշացնում է՝ լաւ կշռադատել ու նոր գնալ այդ քաշինը - «Եթէ գնում ենք, ուղղակի որպէսզի կարողանան Նոր տարի անենք, այո, կարելի է գնալ այդ քաշին, եթէ սոցիալ-տնտեսական այդպիսի վիճակում ենք, իսկ եթէ սպառողը շատ ճոխացնելու համար է գնում այդ քաշին, խորհուրդ եմ տալիս պարզապէս բաւարարուել հայկական աւանդական սեղանով»:

# Պոլիվիոյ Օրէնդարի Մարմինները Դատապարտած են Հայոց Ցեղասպանութիւնը



Անցեալ շաբթուայ ընթացքին Պոլիվիոյ Խորհրդարանի գոյգ պալատները ընդունած են բանաձեւ, աջակցութիւն յաճախելով հայ ժողովրդին իր մղած պայքարին մէջ՝ յանուն մարդու իրաւունքներու պաշտպանութեան, ճշմարտութեան եւ արդարութեան վերականգնման, յայտարարելով նաեւ իր վճռական յանձնառութիւնը մարդու իրաւունքներու եւ արդարութեան պաշտպանութեան ուղղութեամբ եւ դատապարտելով հայ ժողովուրդի դէմ գործադրուած ցեղասպանութեան եւ կրած տառապանքներու ժխտման քաղաքականութիւնը:

Պոլիվիոյ Խորհրդարանի գոյգ պալատներուն կողմէ ընդունուած փաստաթուղթին մէջ յայտարարուած է.

« 1915 թուականի Ապրիլ 24-ի գիշերը Օսմանեան կայսրութեան իշխանութիւնները՝ Միութիւն եւ Յաւանք շրջանակներու կողմէ իրականացուած ցեղասպանութեան, երիտ թուրքերը սկսան հայ մտաւորականներու, քաղաքական գործիչներու, գիտնականներու, գրողներու, արուեստի գործիչներու, հոգեւորականներու, բժիշկներու, հասարակական գործիչներու եւ մասնագէտներու ծրագրուած աքտորները, իսկ պատմական Արեւմտեան Հայաստանի տարածքին հայազգի քաղաքացիական բնակչութեան զանգուածային ջարդերը: Խորհրդարանի երկու պալատները կը հաստատեն իրենց հաւատարմութիւնը մարդկային

իրաւունքներուն, ճշմարտութեան եւ արդարութեան արժէքներուն, կ'արտայայտեն իրենց զօրակցութիւնը հայերուն եւ դատապարտումը՝ Հայոց ցեղասպանութեան եւ հայ ժողովուրդին դէմ իրականացուած մարդկային ծանր յանցագործութեան ժխտողականութեան քաղաքականութիւնը»:

Այս յայտարարութեան ընդունման համար ջանքեր գործադրած է ազգութեամբ քուրդ գործիչ Մեհմետ Ալի Դոդան, որ վերջերս այցելած էր Հարաւային Ամերիկայ թուրք յառաջադեմ մտաւորական Ռազմի Զարաքուլուի հետ:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան ողջունեց Պոլիվիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան դատապարտումը: Այս առթիւ ան յայտարարեց. «Մեր երախտագիտութիւն կը յայտնենք Պոլիվիոյ Խորհրդարանի գոյգ պալատներուն, երկրի ղեկավարութեան եւ բարեկամ ժողովուրդին՝ Օսմանեան կայսրութեան իրականացուած Հայոց ցեղասպանութեան ճանաչումին համար: Այս քայլով՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի սեմին, Պոլիվիոյ իր կարեւոր ներդրումը բերաւ պատմական արդարութեան վերականգնման, մարդկութեան դէմ յանցագործութիւններու ճանաչման, դատապարտման, կանխարգիւման եւ ժխտողականութեան դէմ պայքարի վեհ գործին մէջ», ըսաւ նախարար Նալպանտեան:

## Հոռմի Պապը Թուրքիա Կատարած Այցէն Վերադարձին Անդրադարձած է Հայ-Թուրք Յարաբերութիւններուն

Հոռմի Ֆրանչիսկոս Պապը Թուրքիա կատարած այցելութենէն ետք ցանկութիւն յայտնած է որ, Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանները բացուին:

Թրքական լրատուամիջոցներուն համաձայն, Իտալիա ուղեւորութեան ընթացքին Պապը մաղթած է, որ հաշտութիւն գոյանայ: «Երանի բացուի հայ-թրքական սահմանը: Այդ հրաշալի կ'ըլլայ: Գիտեմ, որ սահմաններու բացման խոչընդոտող աշխարհաքաղաքական խնդիրներ կան, սակայն միայն աղօթենք այս երկու ժողովուրդներու հաշտեցման համար», ըսած է

Պապը: Ան նշած է թէ, կը հաւատայ, որ երկու երկիրները ունին բարի կամք: «Մենք պէտք է հոլովոյթի հաշտեցման աջակցինք: Մաղթենք, որ յաջորդ տարին ըլլայ փոքր նախաձեռնութիւններով ճամբայ բացող եւ մերձեցումի համար կատարուող քայլերու տարի», ըսած է Հոռմի Պապը:

Պոլսոյ մէջ Պապը այցելած էր հայկական Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոց եւ տեսակցած Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մովսէֆեանին հետ, որ 6 տարի է կը գտնուի անկողին՝ կորսնցուցած ըլլալով իր չիշողութիւնը:

# ՍԴՐԿ ԿԵԴՐՈՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՒԲԱՆԻ ՀԵՏ



Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանտ Զակոբեան ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանն ու փոխ ատենապետ, պետական երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանը:

Ողջունելով հիւրերը, նախարար Յակոբեան շնորհալորեց կուսակցութեան Կեդրոնական վարչութեան Հայաստան տեղափոխութիւնը եւ կարեւորեց համահայկական խնդիրներու լուծման մաս-

նակցելու կուսակցութեան պատրաստակամութիւնը: Ընկերներ Տիգրանեան եւ Գալփաքեան շնորհալորեցին նախարար Յակոբեանը՝ Հայաստան-Սփիւռք համահայկական 5-րդ համաժողովը արդիւնաւէտօրէն կազմակերպելու համար, բարձրօրէն գնահատելով նախարարին ներդրումը Սփիւռքը համախմբելու եւ ազգային առաջնահերթութիւնները յստակացնելու գործին մէջ: Քննարկուեցան նաեւ յետագայ համագործակցութեան հարցեր:

## ՆԱՐԵԿ ԳԱԼՍԵԱՆ. ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՕՐ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանսայի Ալֆրիդ քաղաքի ՍԴՀնչակեան կուսակցութեան, «Նազարէթ Բշդիկեան» (Ֆրանսայի Պատուոյ լեգէոնի ասպետ, Ս.Դ.Հ.Կ. Ֆրանսայի կառուցի երկարամեայ ղեկավար) մասնաճիւղի նախաձեռնութեամբ նշուեցաւ Ս.Դ.Հ.Կ.-ի 127-ամեակը: Օրուայ բանախօս, Ս.Դ.Հ.Կ. Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանի քաղաքական կեանքին, Ս.Դ.Հ.Կ.-ի որդեգրած դիրքորոշման, իշխանութիւններու եւ եռեակի հետ յարաբերութիւններուն: Նարեկ Գալստեան նկատեց, որ այսօր Հայաստանին օր առաջ անհրաժեշտ են համակարգային փոփոխութիւններ: Ս.Դ.Հ.Կ. Հայաստանի վարչութ-



եան ատենապետը նաեւ աւելցուց, որ Հայաստանին անհրաժեշտ է գաղափարական ընդ դի մութիւն, քաղաքակա նութիւն, որ որդեգրած է Ս.Դ.Հ.Կ.-ը:

Ելոյ թիւն յաջորդեց ազգային եւ յեղափոխական երգերու երեկոյ:

## ՍԴՐԿ ԿԵԴՐՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ

Շարունակուած էջ 1-էն

Ընկ. Գէորգ Պերկուպերկեան: Վարչապետը կարեւորեց Հնչակեան կուսակցութեան դերը համագային նշանակութիւն ունեցող հոլովոյթներուն մէջ եւ կառավարութեան անունով համագործակցութիւնը շարունակելու պատրաստակամութիւն յայտնեց: Կեդրոնական վարչութեան ընկերները ողջունեցին կառավարութեան կողմէ բարեփոխումներու իրականացումը եւ վերահաստատեցին կուսակցութեան պատրաստակամութիւնը՝ շարունակելու աջակցիլ հայ ժողովուրդի

եւ պետութեան առջեւ ծառայած կարեւոր խնդիրներու լուծման գործին: Ժողովականները միտքեր փոխանակեցին Հայաստանի կառավարութեան տնտեսական քաղաքականութեան՝ գործարար միջավայրի բարելավման եւ տնտեսութեան մէջ ներդրումներու ներգրաւման ուղղութեամբ կատարուող բարեփոխումներուն, նաեւ Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարներուն վերաբերեալ: Արժարժուեցան Հնչակեան կուսակցութեան հետ երկխօսութեան եւ համագործակցութեան վերաբերող թղթածրարներ:

# ՅԵՐՈՍԸ (ԸՆԿԵՐ ՎԱԶԳԵՆ ՄԻՍԼԵԱՆԻ ՅԵՏ)

## ԱԻՆՏԻՍՈՒԱԶՄԻԿ

1981 Սեպտեմբեր 24-ին, 16-ամեայ պարմանիս, ձայնափուռին կպած օրուան լուրերուն կը հետեւէի. մէկ ալիքէն միւսը թարմ լուր մը ստանալու հեւքին մէջն էի. հոգեխուով հապճեպով փարիզէն նորու թիւն մը կը սպասէի:

Այդ թուականէն տասնամեակ մը առաջ, եթէ պաղեստինցի ազատամարտիկներու մարտական գործողութիւնները կը գրաւէին միջազգային լուրերուն առիւծի բաժինը, եթէ արաբ եւ իսրայէլեան հակամարտութեան արիւնայի գարգացումները կը դառնային լրատուութեանց գլխաւոր վերնագիրները, ապա 1980-ականներուն անոնց չափ ու աւելի հայկական վրիժառուութիւնը եւս իր տեղը կը գտնէր հիմնական լրահոսքերուն մէջ: Հայկականը նոյնպէս անազոտ էր, զգեստնիչ էր, պատմական հենք ու քաղաքական դրդապատճառ ունէր. արդար դատի, խլեալ իրաւունքի եւ աղաղակող պայքարի նոր ու մինչ այդ անծանօթ ճիւղ էր. լուր-թեան եւ անտարբերութեան դէմ շունդալից պոռթկում էր:

1981 Սեպտեմբեր 24-ին, աշխարհի լրատուութիւններուն ամենաշատ հոլոված անուններն էին. հայ, Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ (ԱՍԱԼԱ), քամանտո, Եղիա Քեչիզեան, վան: Վստահաբար շատեր նոր կը լսէին հայկական հարցի մը գոյութեան մասին. ակամայ կը հետաքրքրուէին այն ցնցիչ իրադարձութեամբ, որ պատահած էր Փարիզի թրքական հիւպատոսարանին մէջ: Թէ ինչո՞ւ խուճեմ մը հայ երիտասարդներ գրաւած էին թրքական այդ որջը. հաւանաբար շատերու գարմանք պատճառած էր: Տաք-գլուխ այդ տղաքը թող փարիզը վայելէին. կրնայ ըլլալ մտածեցին շատեր: Անտարակոյս, Անգարայի իշխանութիւնները ցնցահարուածի մէջ էին. թէ սա ԱՍԱԼԱ-ն ուրկէ՞ ծնաւ, սա հայկական դատը ինչո՞ւ նորէն հրապարակ ելաւ, հայ «անաբեկիչներ»ուն գլխացաւանքը դեռ չպրծա՞ւ:

Այո, ԱՍԱԼԱ-ն իւրաքանչիւր գործողութեամբ մը փոթորկած էր հայաշխարհը. ելեկտրականացուցած էր Փարիզը եւ որու հետեւանքով աննախադէպ քարոզչական ալիք ծաւալած էր հայկական պահանջատիրութիւնը մեկնաբանող, փոշիներու տակ կքած հայկական դատը լուսարձակի տակ առնող: Մեր

նորագոյն պայքարին տարեգրութեան մէջ «Վան գործողութիւն»ը պայծառ դրուագ մըն էր հայու սիրանքը ապացուցող: 16-ամեայ պարմանիի յատուկ ոգեւորութեամբ միամտօրէն կը կարծէի, որ ԱՍԱԼԱ-յի հարուածներուն տակ անաթուրքիա շուտով պիտի գիջի մեր իրաւունքները. Վանի ազատագրութեամբ մտաւրուտ է. ազգը պիտի միանայ ազատագրական այդ հոսք-կու շարժման եւ մեր նահատակներուն ոսկրտիքները պիտի խաղաղին վերջապէս: Հատուցման պահը հասած կը կարծէի ըլլալ: Ո՞ր հայրենասէր պատանին չէր գտնուողներ մեր հերոսներուն օրինակելի արարքներով: Ո՞ր պատանին բարի նախանձով եւ իտէալական գաղափարներով չէր կրնուեր հայ վրիժառուութեան հատու հարուածներուն դիմաց: 1981 Սեպտեմբեր 24-ի երեկոյեան, հեռատեսիլին առջեւ ակնկառուց կը սպասէի թէ ի՞նչ եղաւ Փարիզի թրքական հիւպատոսարանին առուձը, արդեօք մեր տղաքը օղակն ըրի՞նք թրքական այդ կեղրոնը, կամ ո՞վքեր էին, որոնք դարձած էին ողջ աշխարհին ուշադրութեան առանցքը: Ծանօթ անձե՞ր էին, հա՞յ էին, ուրկէ՞ հասած էին Փարիզ, պիտի կարենայի՞ն սարսափեցնել թշնամին: Ո՞վքեր էին, որ աշխարհին լիչեցողցին հայոց առնականութեան մասին. վերջապէս ո՞վքեր էին մերօրեայ թեհիւրեանները:

Կը դիտեմ, ապա մամուլէն կը տեսնեմ այդ վրիժառական քամանտոյի ղեկավարին դուրս ելլելը թրքական հիւպատոսարանէն՝ ֆրանսական ոստիկանութեան խիտ հսկողութեան ներքեւ: Թաւ ու սեւ պելիւրով, նիհարակազմ ու բարձրահասակ, վիրաւոր 24-ամեայ երիտասարդ մը, մէկ ձեռքը մէջքին, միւսը՝ յաղթանակի Վշշանով: Ո՞վ էր այդ օրուան հերոսը. Վազգէն Միսլեան, իսկ իր գէնքի ընկերները՝ Գէորգ Կիւզեւեան, Արամ Պասմաճեան եւ Յակոբ Ճուլֆայեան:

Կը գմայլիմ, երանի կու տամ անոր եւ հպարտութեամբ կ'առլցնուիմ, որ տակաւին մեր ժողովուրդին ծոցէն կը ծնին նման առիւծներ, հայդուկային շարժման լաւագոյն աւանդոյթները պահպանող մերօրեայ ֆեսայիներ:

\*\*\*

Ո՞վ կրնար գուշակել, որ «կեանքի կարուսէլ»ը այդ մղձաւանջային, հպարտառիթ եւ վիպապաշտական օրերէն 33 տարիներ ետք ինձի հնարաւորութիւն պիտի ստեղծէր ողջագուրուելու այդ հա-



Անկախութեան հռչակման օրերին եւ հրապարակում չէի: Բարձրացրի էի Արագածի ամենաբարձր հանգուանը եւ այնտեղից էի վայելում մեր անկախութիւնը: Իրական երազանքս Մոսկուայի քաղաքային է, բայց մեր տանտններում: Եվ պարծօնելու եմ որս համար...

մեստ գինուորին հետ. ինչ բախտաւոր կը նկատեմ ինքզինքս, որ 33 տարիներ փայփայած երազս կ'իրականացնեմ «Վան գործողութեան» ղեկավարին կողքին ըլլալով:

2014 Սեպտեմբեր 24-ի առաւօտեան կ'ուղղուիմ Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարան՝ տեսնուելու անոր տնօրէնին՝ Կարօ Վարդանեանի հետ: Գրականագէտ ու գրող Կ. Վարդանեանէն կը խնդրեմ իր նորատիպը՝ «Հատուցման Տասներեք Ղօղանջ» խորագրուած, որ պատմուածքներու ժողովածու մըն է ԱՍԱԼԱ-յի գործունէութեան եւ տարբեր հերոսներուն նուիրուած: Ան սիրով կը մակագրէ փոքրածաւալ հատորէն օրինակ մը:

Կը չիչեցնեմ. այսօր «Վան գործողութեան» 33-րդ ամեակն է, պէտք է շնորհաւորել անոր հերոսները:

-Հա էլի,- կ'անդրադառնայ ան. այդ տղաքը արժանի են ամէն ինչի, իսկական հերոսներ են: Պէտք է ողջունել նրանց: Դժբախտաբար, նրանք անտեսուած են այսօր:

Չարմացական հայեացքս նշմարելով կը յարէ. չե՞ս նկատել, որ պետութիւնը պէտք եղած ուշադրութիւնը չի դարձնում նրանց:

Ապա կ'ուղղուիմ Երեւանի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակ, հոն ընկեր Վազգէնը տեսնելու յոյսով: Իրօք, հոն էր ան. կ'ողջագուրուիմ, կը շնորհաւորեմ ջերմօրէն:

-Ընկեր Վազգէն, 33 տարիներ առաջ, այսօր, աշխարհ ոչ ԱՄՆ-ի նախագահին, ոչ Խորհրդային Միութեան առաջնորդին, ոչ Արաֆատին կամ Միթերանին մասին կը խօսէին. այդ օր մարդոց սեւեռակէտը դուն էիր. բոլորը ուշադիր կը հետեւէին քու քայլերուդ եւ որոշումիդ: Դուն ամբողջական հե-

րոս մըն ես, որ մեր ժողովուրդին արժանապատուութիւնը բարձր պահեցիր:

Ան համեստութեամբ, շառագունեալ կը պատասխանէ.

-Իմ փոքր ներդրումս էր հայ դատին, մեր գինեալ պայքարին. շնորհակալ եմ չիչելուդ համար:

Վերադարձիս, երկու մտորումներ կը խլրտան միաքիս մէջ:

Առաջին. ինչո՞ւ մենք հերոսները կը փնտռենք միայն հատորներու մէջ՝ պատմութեան հին էջերը փորփրելով, անցեալին կատարուած սխրագործութիւնները վկայաբերելով, հին հին դրուագներ ոգեկոչելով. ինչո՞ւ յետահայեաց ջանքով կ'ուզենք ոգեշնչուիլ հերոսական տիպարներով: Միթէ՞ շնչող, արարող հերոսներ չունինք մեր շուրջը, որոնց նկատմամբ անամօթաբար անտարբեր կը գտնուինք, կը մոռնանք չաճախ. անոնցմէ ինչ համեստ, պարկեշտ եւ աննկատ մնացած մարտիկներ կան, որոնց փունջ մը սրտապնդիչ խօսք անգամ կը զլանան մարդիկ. Վազգէն Միսլեան, Աբրահամ Թովմասեան, Մարտիրոս Ժամկոչեան, Յակոբ Ճուլֆայեան, Գէորգ Կիւզեւեան, Համօ Մոսկոֆեան եւ ուրիշներ: Անոնք բանտի նկուղ ու կեանքի դառնութիւն ճաշակեցին կամովին՝ յանուն հայ սերունդներուն ազատութեան եւ հայրենիքի ազատագրութեան:

Երկրորդ. ինչո՞ւ կը կարծենք որ հերոսները երկնառաք առասպելական դէմքեր են. յատուկ շնորհներով օժտուած երկնատուր պարգեւներ. ի վերուստ կուսուած երկաթեայ նկարգիւրի տէր տիպարներ: Ոչ, հերոսները կը ծնին մեր մէջ, կը դաստիարակուին տուններու մէջ, կուսակցական ակումբներու եւ միութիւններու մէջ. ինչ-

Շար.ը էջ 20

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**


**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աձիրաժողտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

## ՉԵԹԻՆՕՂՆՈՒՆ ԷՐՏՈՂԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴԱՏԵԼՈՎ ՄԵԶԼԻՍՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՇԱՆՍԵՐ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

Շատ փաստեր կան կարծելու, որ օրերս թուրքիայի ժողովուրդների Դեմոկրատական կուսակցության (HDP) պատգամաւոր Սեբահաթ Թունճելի ներկայացրած օրինագիծը, որով վերջինս կոչ էր անում պետութեանը ներողութիւն խնդրել Յեղասպանութեան համար, անկեղծ է: Թուրք հրապարակախօս, գրող Սահիթ Չեթինօղլու յայտնեց. «Որեւէ կասկած չկայ, որ պետութիւնը մեղաւոր է Յեղասպանութեան իրականացման համար: Սակայն ինչպէս ենք իմաստաւորելու այդ գործընթացը, անհրաժեշտ է այս գործընթացում համագործակցել, լինել զգօն եւ փորձել ջրի երես դուրս հանել Յեղասպանութեան իրական մեղաւորներին, իսկ բոլոր իրանք, ովքեր ճանաչում են Յեղասպանութիւնը եւ ունեն խլած գոյք, անպայմանօրէն դրանք յետ վերադարձնեն: Պարտադիր է, որ պետութեան գլխաւորութեամբ բոլորը ստանձնեն պատասխանատուութեան իրենց բաժինը եւ դրան համապատասխան վերաբերմունք դրսևորեն: Բոլոր նրանք, ովքեր արդարութեան են ցանկանում, իրաւութեւն ունեն պահանջելու այս ամէնը»:



Սեբահաթ Թունճելի անձնական նախաձեռնութիւնն առնուազն կարելու է այս առումով, որ այն մեծ ներուժ ունի արդարութեան շուրջ քննարկումներ իրականացնելու համար: HDP-ին մտնում է տէր կանգնել առաջարկին, եւ դրան համապատասխան վերաբերմունք ցուցաբերելով՝ իր ներսից սկսել, արդարութեան հաստատումը»- յոյս է յայտնում մտաւորականը:

Առաջարկի ընդունման հնարաւորութիւնը

«Կարող ենք ասել, որ այսօր թուրքիայում իշխանութիւնը ընդունում է թէ՛ կեդրոնական, թէ՛ տեղական մակարդակով: Հաշտեցումը երկու անձի նախաձեռնութիւնն է: Էրտողանը եւ նրա գերու գերում հանդէս եկող Օճալանը, սրանք են քաղաքական դերասանները: Վերջնական խօսքն այս երկու դերակատարներն են ասելու», - նման տէսակէտ է յայտնել Չեթինօղլուն:

Նրա համոզմամբ, եթէ Օճալանի վերոնշեալ տէսակէտին յաւելենք էրտողանի՝ «Կը ներէք, բայց ինձ անգամ հայ են անուանել» խօսքերը, ապա կարող ենք առանց զգուշաւորութեան հանգիստ պնդել, որ առաջարկը հնարաւորութիւն չունի ընդունուելու:

1915-ի Ցեղասպանութիւնը պետութեան եւ յանցագործութեան մեղսակիցների համար պատմական պահ էր

«2015 թուականին պետութիւնը Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցի դիմաց ամէն յարմար առիթի դէպքում սկսելու է ներկայացնել Չանաքքալէի պատերազմի 100-րդ տարեդարձը, եւ թէ ինչպէս հնարաւորութիւններ չունեցող բանակը (առանց ինքն իրենց հարցնելու, թէ ինչո՞ւ պատերազմ յայտարարեց, եթէ պատերազմելու հնարաւորութիւն չունեն) Չանաքքալէում յաղթանակի հասաւ:

Կարելու է հարց էլ, թէ ինչպէ՞ս պետութիւնը, պատերազմի սկզբում այդ անհնարինութեան վիճակում գտնուելով, 4 տարի շարունակ պատերազմ վարեց: պատասխանն էլ 1915-ի Ցեղասպանութիւնն է: Պատերազմի գործընթացը փոխհատուցուեց 1915 թուականի Ցեղասպանութեան գործընթացով», - նշում է Չեթինօղլուն՝ յաւելելով, որ ականյայտօրէն երեւում է, թէ ինչպէս պատերազմական գործընթացը փոխհատուցուեց հայերի, ասորիների, պոնտոսցի յոյների կորուստներով, ինչպէս նաեւ պատերազմական պիւտճէի եւ

Ներողութիւն, սակայն ինչպիսի՞ն

«Ժողովուրդների Դեմոկրատական կուսակցութիւնը եւ դրա աւանդական քաղաքական գործիչները հայոց ջեղասպանութեան պատճառով մի քանի անգամ ղեկավար մակարդակով «ներողութիւն» են խնդրել: Սակայն «մեր պայերը» խօսքերով սկսուող ելոյթներում ոչ ոք չի խօսում իրենց կենսաբանական պայերի մասին: HDP ոչ մի ղեկավար չի բարձրաձայնում իր կենսաբանական պայի՝ 1915 թուականին ունեցած դերակատարութեան մասին», - նշում է թուրք մտաւորականը՝ ընդգծելով, որ եթէ խօսում էլ են այդ մասին, զայրանում են եւ պնդում, որ այդ պահանջը վնասում է թուրքիայի Հանրապետութեանը:

Խնամքով պատրաստուած վերոյիշեալ գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ ԸՄԳ համալսարանի Ֆրիէնտս ոֆ Արմէնիա միաւորի էնլիկհանմէնդ քառեակի մասնակցութեամբ, որու գեղարուեստական ղեկավարն է Մարինա Մանուկեանը: Անոնք հանդիսատեսներուն հրամցուցին կոմիտասի հոգեգմայլ երաժշտութեանէն «Նուպար, Նուպար», «Քէլէ, Քէլէ» եւ «Կոտունկ»ը, նաեւ յայտնի կտորներ՝ աշխարհահռչակ այլ յօրինողներէ, արժանանալով բոլորի անկեղծ գնահատանքին՝ անխտիր:

Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ

Պերճ Սեդրակեանի գնահատագիրը՝ ուղղուած Կեդրոնի Տիկնանց Յանձնախումբին, ընթերցեց Հարաւային Քալիֆորնիոյ Շրջանակային Յանձնախումբի նախկին Ատենապետներէն Տ. քթ. Յովիկ Մելիտոնեան: Նախագահ Սեդրակեան դրուատեց Տիկնանց Յանձնախումբի աշխատանքը եւ գովասանքով արտայայտուեցաւ Սուրբիոյ մեր կարօտեալներուն օգնութեան ձեռք երկարելու իրենց ազնիւ ժեսթը:

Կեդրոնի Տիկնանց Յանձնախումբի նախկին Ատենապետուհի Տիկին Անժել Գարայեան խօսք առնելով՝ դիտել տուաւ թէ Հ.Բ.Ը. Միութեան Հայկալի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան երկրորդական վարժարանը այժմ բացած է իր դռները եւ հոն կ'ուսանին 700 աշակերտ-աշակերտուհիներ: Տիկին Գարայեան շարունակեց իր խօսքը շեշտելով թէ անոնք այսօր՝ աւելի քան երբեք, պէտք ունէին մեր նիւթական օգնութեան: Այս սրտառուչ կոչին ետք՝ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ, ի նպաստ վարժարանի գանազան կարիքներուն:

Արմէնիան Ոպսիւրէր անգլիատառ շաբաթաթերթի խմբագիր Փրոֆէսոր Օշին Քէշիշեան հրաւիրուեցաւ կատարելու փակման խօսքը: Ան նշեց թէ Հ.Բ.Ը. Միութիւնը աշխարհի մէջ հայկական ամենամեծ բարեսիրական կազմակերպութիւնն է որ ունի 18 դպրոցներ, որ կ'ուսանին աւելի քան 8,000 ուսանողներ: Ան ապա բարձր գնահատեց եղած աշխատանքը, ի նպաստ Սուրբահայերուն:

### ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԵԱՆ


#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Սովետական կամ Նոյեմբերեան (Նոյեմբեր 29) Հայաստանի եօթնամյա տարուայ կեանքին մէջ ոմանք կ'ուզեն տեսնել ազգային ոգիի ոտնակոխումն ու մարդկային արժէքներու անտեսումը: Իսկ ոմանք ալ անոր մէջ կ'ուզեն տեսնել ափ մը հայրենի հողի պահպանման եւ գոյատեւման երաշխիքը: Ոմանք կը յիշեն անիրաւ պատճառաբանութիւններով եւ գրպարտութիւններով անմեղ մարդոց գնդակահարուելը կամ անոնց Սիպերիա աքսորուելը եւ հոն երկար տարիներ բանտերու մէջ մաշիլը: Իսկ ոմանք ալ հպարտութեամբ կը յիշեն անունները սովետահայ հռչակաւոր մարդոց, ինչպէս՝ Վիքթոր Համբարձումեան, Ալիխանեան եղբայրներ, Արամ Խաչատուրեան, Տիգրան Պետրոսեան, Ալպէր Ազարեան, Մարէշալ Բաղրամեան եւ Արտեմ ու Անաստաս Միկոյեաններ:

Ինչպէս որ ալ ուզենք տեսնել կամ չիշել քսաներորդ դարու հայ անցեալը, գաղափարական սուր պայքարներու նեղ շրջանակի սահմաններէն դուրս ելլելու դժուարութեան առջեւ պիտի գտնուինք եւ իրապաշտութիւնը պիտի գիշի կրքոտ գագաթներու եւ կողմնակալ բացատրութիւններու:

Այս տարուայ Ապրիլ ամսուն, Հայաստանի մէջ Անաստաս Միկոյեանի արձանը կանգնեցնելու որոշումին թեր եւ դէմ ըլլալու բաւական աղմուկ բարձրացաւ կողմերու միջեւ, որոնք վերոյիշեալ այդ երկու տարբեր կարծիքներու թունդ պաշտպաններն են:

Այս առթիւ մեր կատարած պրպտումները ոչ-հայկական աղբիւրներէ, կամ աւելի ճիշդը՝ օտար լրագրութիւններու համացանցի կայքէջերէն քաղուած, ցոյց տուին, որ Անաստաս Միկոյեանը չիշուած է ընդհանրապէս որպէս սովետական բոլոր վարչաձեւերու եւ ղեկավարներու հետ «եօլա» գացող, այսինքն՝ անոնց հետ ճամբորդող պետական մարդ (statesman): Ընդհանրապէս ան կը ճանչցուի որպէս The Vicar of Bray of politics-ը, զինք նմանցնելով այն ժողովրդապետին կամ քահանային, որուն մասին կ'ըսուի թէ 16-րդ դարուն, Անգլիոյ չորս գահակալներու (Հենրի 8-րդ, Էտուարդ 6-րդ, Մէրի Ա. եւ Էլիզաբէթ Ա.) իշխանութեանց ընթացքին, երբ կաթոլիկ եւ բողոքական դաւանանքներու իշխանափոխութիւններով լեցուն էր այդ շրջանը, ան կը դառնար դաւանափոխ՝ ամէն անգամ որ իշխող արքան փոխէր իր դաւանանքը: Քահանային դաւանափոխութիւնը կարգ մը պատմաբաններու կողմէ կը նկատուի դրական, որոնք կը հաւատան թէ ան այդ կեցուածքը ունեցած է՝ օգտակար ըլլալու իր հօտին եւ ծուխին: Անգլիացի պատմաբան Simon Sebag Montefiore կը խօսի 1937 թուականի ստալինեան լայնատարած ոճիրներու ընթացքին Անաստաս Միկոյեանի ունեցած դերին մասին, եւ կ'ըսէ թէ Միկոյեան «enjoyed the reputation of one of the more decent leaders» (վայելեց համբաւը որպէս մէկը ամենէն պարկեշտ ղեկավարներուն), եւ թէ ան յետոյ օգնեց գոհերուն ու խստորէն աշխատեցաւ Ստալինի հետքը ջնջելու անոր մահէն ետք՝ 1953-ին: Ուրիշ տեղ մը չիշուած է թէ Սեպտեմբեր 1937-ին, Ստալին Մի-



կոյեանը կը ղրկէ Երեւան, Մալենքովի եւ Պերիալի հետ միասին, անոր տալով 300 անուններով լեցուն ցանկ մը, որպէսզի «մաքրագործէ» Հայաստանի Կոմունիստ Կուսակցութիւնը: Յիշուած է նաեւ թէ Միկոյեան կը փորձէ՝ բայց կը ձախողի (tried but failed) ազատելու անձ մը գնդակահարումէ, որ ձերբակալուած էր Պերիալի կողմէ, եւ թէ այն ատեն ձերբակալեաները եղած են հազար հոգի ու Կոմկուսի քաղաքական պիւրոյի (politbureau) ինը հոգի հաշուող կազմէն եօթը հոգին մահուան դատապարտուած է, եւ թէ Միկոյեան շատ մը առիթներով փորձած է փրկել կեանքը իր նախկին ընկերներուն՝ բայց չէ կրցած, եւ թէ իր ունեցած մեղմութիւնը (leniency) դատապարտեալներու նկատմամբ գուցէ եղած է պատճառը, որպէսզի ան Ստալինի կողմէ Հայաստանի ղրկուէր քննելու համար անոր հաւատարմութիւնը...:

Վերոյիշեալ օտարին ակնոցով դիտուած եւ անոր գրչով գրուած բացատրութիւնները կարդալէ ետք, մարդ կը մտածէ՝ թէ արդեօք 16-րդ դարու անգլիացի քահանային օրինակով Միկոյեանն ալ փորձեց թագաւորի շուքին տակ իր հօտին (հայրութեան) օգտակար ըլլալ: Արդեօք ճիշդ է թէ անոր ջանքերով տեղի ունեցաւ 1947 թուականի ներգաղթը, որպէսզի չիրականանար Ստալինի փափաքով առաջադրուած Հայաստանի հանրապետութեան աստիճանագրկուածը եւ ինքնավար գայն շրջան դարձնելու նենգ քաղաքականութիւնը:

Արդեօք անոր «մաքրագործում» կատարելու պաշտօնով Հայաստան ուղարկուելը ծուղակ մը չէր, որ ինք ալ մաքրագործուէր՝ ազգային գագաթները ցոյց տուած ըլլալու յանցանքով: Արդեօք ակնաւորած գետնի վրայ քալելու պարտադրուողը պէտք է ինքզինք պայթեցնէ որպէսզի «հերոս» նկատուի...: Արդեօք Ստալինը Քրեմլինի գերեզմանէն դուրս նետող եւ Պերիան գնդակահարել տուող Խրուշչեւի իշխանութիւնը ինչո՞ւ Միկոյեանը պատուեց, գայն ամբողջ Սովետ Միութեան մէջ երկրորդ ամենէն գորաւոր մարդը դարձնելով: Ամէն մարդ ունի իր գովելի ու քննադատելի կողմերը եւ անկասկած որ Անաստաս Միկոյեանն ալ ունի իր քննադատական կողմը. մեր փոքր ժողովուրդին հայ մեծ մարդոցմով հպարտանալու հաճոյքը մեզ կը մղէ տեսնել անոր գովելի կողմը:

Անաստաս եւ Արտեմ Միկոյեանները, առաջինը՝ իր իմաստուն քաղաքագիտութեամբ եւ երկրորդն ալ՝ իր վարպետ ճարտարագիտու-

### ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԻՍԼԱՄԱՅԱԾ ԴԱՅԵՐ ԵՆ ԱՊՐՈՒՄ

Մ. Խ.

«Թուրքական հասարակութեան մէջ հակահայ տրամադրութիւններ բորբոքելու ճանապարհով ներքին թշնամու կերպարի ստեղծումը եւ նրա դէմ ազգայնամոլական ճակատի համախմբումը հետապնդում են հեռահար քաղաքական նպատակներ: Մօտակայ նպատակը Թուրքիայի իսլամացած հայրութեան (նաեւ՝ փոքրամասնութիւնների) մէջ ինքնութեան վերադարձի նկատուող զարթօնքը խեղդելն է: Տուեալ դէպքում իսլամացած հայերին թիրախ դարձնելը պայմանաւորուած է հայ-թուրքական յարաբերութիւնների մէջ պատմականօրէն գոյացած կնճռով, որն այսօր նոր դրաներուն մէջ է ստանում մի կողմից Հայոց ցեղասպանութեան ու դատապարտման պահանջով, միւս կողմից՝ Թուրքիայի ժխտողական քաղաքականութեամբ»: Այսպէս է կարծում Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոնի ղեկավար Հայկազուն Աւրեցեանը, այդ մասին գրելով իր նոր լոյս տեսած «Կրօնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի հանրապետութիւնում» ուսումնասիրութեան նախաբանում: Գիրքը Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցին ընդառաջ տպագրուել է Հայաստանի նախագահի գործընկեր կազմակերպութեան՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի յայտարարած դրամաշնորհային մրցոյթի շրջանակներում: Գրքում ներկայացուած է Օսմանեան կայսրութիւնում եւ Թուրքիայի Հանրապետութիւնում հայերի կրօնափոխութեան մի քանի կարեւոր դրուագների համառօտ պատմութիւնը: Առանձին գլուխ է յատկացուած համաշխարհային եւ Դերսիմի հայերի կրօնափոխութեան խնդրին, մեծ անդրադարձ կայ Հայոց ցեղասպանութեան շրջանին եւ յաջորդած ժամանակաշրջանի իրադարձութիւններին՝ մենչեւ մեր օրեր, զուգահեռ վեր հանելով կրօնափոխ հայերի արդի խնդիրներն ու դրանց նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքը:

Այս աշխատանքը կարելի է դիտարկել վերջին շրջանի այն նոր որակի ջանքերի համատեքստում, երբ արդէն ուսումնասիրողները դեռալ առ դեռալ, մասնաւոր ոլորտներ եւ հանգամանքներ ուսումնասիրելով են փորձում յետ տանել վարագոյրը Հայոց ցեղասպանութեան շարժառիթների բացայայտման առումով, Յեղասպանութեան ընդհանրական նկարագիրն ամբողջացնելով, ճանաչման, ու որ առաւել կարեւոր է՝ հատուցման համար հիմք նախապատրաստելու պատին նոր քարեր աւելացնելով:

Խորհուրդ տալով ձեռք բերել եւ ընթերցել բազմաթիւ հետաքրքրական տեղեկութիւններ պարունակող գիրքը, մէջբերենք դրանցից մի քանիսը:

Ներկայում Թուրքիայում ապրող ծպտեալ հայերի թուերի մասին այլ վկայութիւններից բացի՝ մէջբերում է Հրանտ Դինքի մա-

հից յետոյ «Ակօս» թերթի խմբագրի պաշտօնում նրան փոխարինած էտիեն Մահչուփեանի այն տեսակէտը, որ 60 հազար հայ քրիստոնեաներից բացի՝ Թուրքիայում ներկայում բնակուած են մօտ մէկ միլիոն մահմեդական դարձած հայկական արմատներով թուրքեր, թէեւ այս իրողութիւնը թուրք պաշտօնեաները չեն ուզում ընդունել: Մէկ միլիոն թիւը հաւանական է համարում նաեւ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն Ռուբէն Սաֆրաստեանը:

1935 թուականին նախատեսուել էր անցկացնել Հանրապետական Թուրքիայի պատմութեան մէջ երկրորդ մարդահամարը: Սակայն բացայայտ մարդահամարից առաջ պետութիւնը գաղտնի որոշմամբ անց էր կացնում մէկ այլ մարդահամար՝ ճշտելու համար իսլամացած փոքրամասնութիւնների թիւը, ընդ որում՝ դա յոյժ գաղտնի էր արուած՝ ներկայ անուն ազգանունից բացի՝ այդ անձանց նախկին անուն-ազգանուն-հայրանունը, ծննդեան թիւն ու վայրը, մի շարք այլ տեղեկութիւններ ամրագրելով: Այդ մարդկանց վերաբերմամբ դեռեւս իթթիհատական ժամանակներում հաւաքուած տուեալներ էին փոխանցուել, նրանց անվատահեղի տարրեր համարելով, իսկ այդ՝ 1935 թուականի մարդահամարին նրանց մասին տուեալները թարմացուել են: Այսինքն՝ ծպտեալ հայերի վերաբերեալ պետութիւնն ունեցել եւ օգտագործել է ծածկագրեր: Մէջբերուել է պուրասահ լրագրող Ալին Օզինեանի յօդուածից հատուած. «Պատահաբար կամ թերի ուսումնասիրութիւնից յետոյ զինուորական վարժարան ընդունուած որոշ կուրսանտներ կարճ ժամանակ անց առանց պատճառի դուրս են մնում, իսկ ամենադաժանը բանակ գորակոչուած «թուրք» երիտասարդի համար այն յայտնութիւնն է, որ հանգուցեալ սիրելի Այլէ տատիկի իսկական անունն Աղաւնի է եղել, եւ այդ պատճառով նրան մի քանի ամիս անիմաստ հարցաքննում են ռազմական ոստիկանութիւնում: Արդիւնքում նա դժուարանում է ասել՝ ո՞րն է աւելի ծանր՝ հարցաքննութիւնները, թէ տատիկի հայ լինելու բացայայտումը»: Օզինեանի այդ յօդուածը վերնագրուած էր՝ «Թուրքական պետութիւնը չի մոռացել քո հայ լինելը...»:

Լրագրային հրապարակման մէջ, իհարկէ, դոյզն ինչ հնարաւոր չէ փոխանցել թեմայի շեշտադրումներն ու գրքում առկայ հետաքրքրական ողջ տեղեկատուութիւնը. մեր խնդիրն է իրազեկել՝ այժմ կայ այսպիսի գիրք, որը պատմում է Օսմանեան եւ Հանրապետական Թուրքիայում իսլամացման քաղաքականութեան մասին, կրօնափոխ հայերի խմբերի ու բնակութեան վայրերի վերաբերեալ ճշգրիտ տեղեկութիւններ է փոխանցում, Համաշխարհային Դերսիմի իսլամացած հայերի պատմութիւնը տալիս, ինչպէս նաեւ՝ նկարագրում կրօնափոխ հայութեան ինքնութեան ներկայ գարթօնքը:

Հայաստանի մէջ անոնց արձաններուն կանգնումը պատիւ կը բերէ Հայաստանին:

Թեամբ, ամբողջ մարդկութեան կողմէ արժանացած են բարձր յարգանքի եւ կը նկատուին բոլոր ժամանակներու ամենէն հռչակա-



### ԱՐԺԷՔԱԻՈՐ ՍԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

#### ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍԵԱՆ

Երկրորդ հրատարակութեամբ լոյս տեսաւ մի շարք արժէքաւոր մենագրութիւնների հեղինակ Վահան Բահարեանի «Աքսորեալի Գողգոթան» գիրքը: Ինչպէս նշուել է գրքի առաջաբանում, այն «Ներկայացնում է հայ ժողովրդի մի բեկորի՝ որպէս ակնաստեսի վկայութիւնները իր եւ իր նման բազմաթիւ հայերի՝ Սիրիայի անապատներում եւ յատկապէս Տէր Զօրում նրանց ողբասկանի մասին...»:

1915 թ. Օսմանեան կայսրութիւնում մեր ժողովրդի դէմ գործադրուած ցեղասպանութեան (անմեղ զոհերի յիշատակի) 100-ամեայ տարելիցի նախօրեակին Վ. Բահարեանի գիրքը սպասուած հրատարակութիւն է:


«Յիշատակներ» խորագրով բանաստեղծութեան մէջ հեղինակը ազնուօրէն շեշտել է, որ սոյն գիրքը իր «հոգու պարտքն է սրբազան, անթաղ մնացած եղեռնի զոհերին...»: Իրապէս, ապրիլեան նահատակների յիշատակը չմոռացուելու համար գրուած այս գիրքը, մեր համոզմամբ, իր իւրայատուկ տեղը պիտի ունենայ իւրաքանչիւր հայորդու օճախում:

Գրքում, բացի ցեղասպանութիւնը վերապրած ակնաստեսի ստույգ վկայութիւններից, ներկայացուած են նաեւ հայ անձնուրաց կամաւորների քաջագործութիւնները: Բնականաբար, յատուկ անդրադարձ է կատարուած Արարայի ճակատամարտի հայ հերոսներին:

Հեղինակի ոճը սեղմ է, բայց բնութագրական, առանց երկարաբանութեան: Վ. Բահարեանը գրքի սկզբի պատմական ակնարկում ամփոփ, սակայն համընդգրկուն շարադրանքով անդրադարձել է անցեալ դարի առաջին տասնամեակների ողբերգական իրադարձութիւններին: Անվիճելի է հեղինակի հետեւեալ պնդումը. «1915 թ. Հայերի ցեղասպանութեան կազմակերպողն ու իրագործողը եղաւ թուրքական պետութիւնը՝ գերմանական իմպերիալիստների աջակցութեամբ, բայց մեղքի մեծ բաժին ունեն նաեւ հայ ժողովրդի «դաշնակիցները»...»՝ «դաշնակիցները» չակերտեալ բառը վկայութիւնն է քրիստոնէայ դաշնակից պետութիւնների դիւանագիտական խաղերի ու խարդապանքների, որ առ այսօր տարբեր եղանակներով ու ձևերով շարունակուած է նաեւ Արցախեան շարժման, հայ ժողովրդի հերոսական պայքարի արդիւնքում ազատագրուած Լարաբաղի Համարապետութեան փաստացի ճանաչման գործընթացում:

Տպաւորիչ է Վ. Բահարեանի «Աքսորեալի գողգոթան» գրքի երկրորդ հրատարակութեան դրոշմանիշերի շարքը: Այն ամփոփում է աշխարհի տարբեր երկրներում (բնականաբար, առաջին հերթին մայր հայրենիքում) Հայոց ցեղասպանութեան նուիրուած դրոշմանիշերը: Գրքի ծանօթագրութիւններում հեղինակը ճիշտ է վարուած, ամփոփ կերպով կանգ առնելով Քրիստի նամակների ժողովրդի: Շեշտուած է այն միտքը, որ «Սոյն նամակների միջոցով թուրք-խալի ազգային կառավարութիւնը նպատակ է ունեցել արագացնել հայերի արտագաղթը Կիլիկիայից...» (էջ 92): Անտարակոյս, սոյն նամակների գոյութիւնը վկայութիւնն է Օսմանեան թուրքերի թրոճած անմարդկային վայրագութիւնների:

Վահան Բահարեանը սոյն մենագրութեան ծանօթագրութիւնները



կազմելիս օգտագործել է շուրջ մէկուկէս տասնեակի հասնող հանրագիտարաններ, մենագրութիւններ, յուշեր:

Տակաւին գրքի երկրորդ հրատարակութեան պատրաստութեան ժամանակ մենք այն միտքն էինք արտայայտել, որ ցանկալի է Վ. Բահարեանի «Աքսորեալի Գողգոթան» թարգմանուի մի շարք այլ լեզուներով (առաջին հերթին՝ թուրքերէն, բնականաբար, նաեւ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն, իսպաներէն): Ցաւօք, մեր եւ վստահաբար, հեղինակի այդ ցանկութիւնը առայժմ մնում է անաւարտ: Թոււմ է, դա իրագործելու համար մեծ նիւթական միջոցներ անհրաժեշտ չեն: Ընդամէնը 100 էջ ծաւալով գրքի մասին է խօսքը: Վերջերս հեղինակը մի տխուր իրականութիւն էր շեշտել մամուլում: Խաղատներում հայորդիներից շատերը տասնեակ հազարաւոր տղարներ են վատնուած, բայց ահա մի 10-15 տղար զլանում են տրամադրել նման մի արժէքաւոր գիրք ձեռք բերելու համար: Ցաւ ի սիրտ շեշտելով հանդերձ այս իրողութիւնը, ուզում ենք հաւատալ, որ կը գտնուեն ազնիւ մեկեանաներ, որոնք հայթայթելով բաւարար քանակութեամբ նշուած հրատարակութիւնից, կը տրամադրեն մեր կրթօճախներին, բարեսիրական, մշակութային կազմակերպութիւններին: Ինչ վերաբերուած է այլ լեզուներով գիրքը հրատարակուած տեսնելու ցանկութեանը, այն մնում է օրակարգում: Այդպիսով, օտար հազարաւոր ընթերցողներ ոչ միայն կը տեղական մարդկութեան պատմութեան մէջ իրագործուած առաջին ցեղասպանութեան մասին, այլ, նաեւ ինդիոս չեն դնի պատմագետների առջեւ պարզելու, թէ «արդե՞ք մածոնը սեւ չէ...», ինչը անընդհատ եւ տարբեր ամբիոններից ճամարտակում է թուրքը, թէ բացէք արխիւները թերթիէ թղթապանակները...: Վստահ են, որ «մաքրագարդել»-ոչնչացրել են իրենց արխիւները: Ինչքան էլ ոչնչացրած լինեն, միեւնոյնն է Մորգենթաուի եւ այն օրերի բազում վկաների անուրանալի ապացոյցները բաւական են թուրքին ջարդարարի «տիտղոս» տալու համար: Ոճրագործ թուրքի ձեռքը ի վերջոյ պէտք է բռնուի: Վահան Բահարեանի «Աքսորեալի Գողգոթան» գիրքը այդ նպատակին հասնելու ճանապարհի մի մղիչ եւ անհրաժեշտ ազդակ է:

Հաւատանք, որ գիրքը ոչ միայն կ'արժանանայ ընթերցողների լայն արձագանքին, այլեւ կը գտնուեն ազնիւ մեկեանաներ այն զոհուածները տալու քաղաքակիրթ լեզուներով, ինչու չէ, նաեւ թուրքերէնով...:

### ԲԺՇԿՈՒՅԻ ԳՈՐԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՏՔԵԱՆՔԸ

#### ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Բոլորովին վերջերս 2014 թուականը իր աւարտին չհասած, Երեւանի բժշկական համալսարանի շրջանաւարտներէն բժշկուհի Գոհար հրատարակած է նոր գիրք մը հետեւեալ գոյգ վերնագրերու տակ. «Մնունդը թող ըլլայ ձեր դեղը, իսկ դեղը՝ սնունդը: Ժիշդ սնունդ՝ առողջ կեանք»:

Բժշկուհիին մտածումներուն ամբողջ կիզակէտը մարդ արրածին առողջ ապրիլն է: Բժշկուհի Գոհար իր ուսումնա սիրութենէն յետոյ անդադար իր կապը անարատ պահելով բժշկագիտութեան հետ, հարստացուցած ըլլալով իր գիտելիքները տեւական ուսումնասիրութիւններով, արդէն նախապէս մամուլին յանձնած է երեք անուն գիրք.:

Ա.- 2000-ին «Հայ Կնոջ Ուղեցոյցը»:

Բ.- 2007-ին «Առողջութիւնն ու Մնունդը»:

Գ.- 2011-ին «Ընտանիքին սեռային առողջապահութիւնը»:

Դ.- 2014-ին «Ժիշդ սնունդ առողջ կեանք»:

Կը տեսնէք, որ բժշկուհին իր դերին մէջ կը գտնուի՝ ոչ թէ կը բուժէ հիւանդները, այլ հատորէ հատոր կ'աշխատի, կը համոզէ որ մարդիկ չհիւանդանան, ապրին առողջ, որովհետեւ հիւանդութիւնները կը սարսեն մարդը, հոգեպէս կ'ընկճեն եւ անվերադարձ ինչ մը կը տանին մեր ֆիզիքականէն:

Այս բոլորին առաջը առնելու համար, հաւատարիմ իր բժշկի հանգամանքին իր այս գիրքին 240 էջերուն վրայ խորհուրդ կուտայ հետեւի հետեւեալ թեղադրանքներու, արդիւքին հետեւիլ ու նախ ուշադրութեամբ հետեւիլ առողջ ապրելակերպի սկզբունքներուն, գիտութեան անդակաւորներին, հիւանդութեան պարագային ներառնելիք սնունդին, արեան խումբերուն առողջութիւնը պահող անդամիւթերուն, կենսանիւթերուն, նկատի ունենալով նաեւ ժողովրդական եւ աւանդական բժշկութիւնը:

Անշուշտ, բժշկուհի Գոհար, այս բոլորը մարդոց թելադրելէ առաջ ինք խորապէս ուսումնասիրած ըլլալով ստեղծելով իր թելադրանք պահանջը մարդոց վասն իրենց առողջութեան, մարդոց դիտել տալով, համոզելով, որ իրենց երջանկութեան մէկնակետը առողջութիւնն է: Հիւանդ մարդը չի կրնար երջանիկ ըլլալ:

Վանեցիները ընդունելով վերոյիշեալ նկատուածութիւնները, պիտի ըսէին՝ գոչութիւնը լաւ բան է: Բժշկուհի Գոհար իր այս գործին յառաջաբանին մէջ կը գրէ. «Կեանքը կը տրուի մէկ անգամ եւ հարկ է պայքարել զայն առողջ եւ ուրախ ապրելու համար եւ կեանքի մէջ ամէն ինչ կարելի է գնել դրամով, բացի առողջութենէն, ուրեմն պահանք զայն»:

Անշուշտ, բժշկուհիին այս առաջադրանքին անաստողները կը պատժուին հիւանդութեամբ: Լաւ է անսալ այս խորհուրդին: Նախապէս ալ բժշկուհին կը յայտնէ թէ. «Այս գրքին մէջ նկարագրուած է 250 անուն անդամիւթերներու, պտուղներու, բանջարեղէններու, ընդդէմը, համեմունքներու օգտակարութիւնն ու առողջապահական նշանակութիւնը»:

Անդրադարձ կատարուած է յաճախ հանդիպող հիւանդութիւններուն, ինչպէս շաքարախտը, ոսկ-



րախտը, քաղցկեղը, սիրտ-անոթային, ստամոքս, աղիքային հիւանդութիւնները եւ անոնց կապը սնունդին հետ: Տրուած է արեան խումբերուն, գիտութեան եւ առողջութեան հետ կապուած տարբեր հարցերու ժամանակակից մեկնաբանութիւններ:

Եթէ բժշկուհին այսքան ծանրածանր նիւթ մը ուսումնասիրելով ընթերցողի ակերտուն դրած է այս պատրաստի բուժումին պայմանները, ինչո՞ւ չօգտագործել երբ մանաւանդ հատորին յաջորդ էջերուն վրայ կան ծաւալուն բացատրութիւններ, օրինակ. ի՞նչ է առողջութիւնը հարցին պատասխանը. «Առողջութիւնը հարստութիւն է, որ կը ստանանք ծնունդի պահուն եւ գոր անգթօրէն կը վատնենք կեանքի ընթացքին. եւ ի՞նչ է հիւանդութիւնը, հիւանդութիւնը օրկանիզմի մէջ եղած հիւանդագին փոփոխութիւններու ամբողջականութիւնն է, ու կան միջոցները գտնուք յայտնաբերելու եւ բուժելու: Ատիկա շատ անգամ կախում ունի մեր ընտրած սնունդէն: Մնունդը պէտք է ըլլայ որակով, առողջ պահելու համար մեր մարմինը»:

Գիտնալու ենք, որ խաշած գետնախնձորը կը մարսուի անմիջապէս, մինչ տապկուած գետնախնձորը կը մարսուի չորս ժամուան ընթացքին եւ հում սնունդի բջջանիւթը կ'արագացնէ մարսողութիւնը:

Հոս տրուած են թարմ սնունդի առաւելութիւնները: Խօսած է աղիքներու դերին շուրջ, նստակեաց կեանքին վնասները, մարմինը շարժում կը պահանջէ: Ահա թէ ինչու մարդիկ կը հետեւին մարզանքի: Տրուած են սննդականոնի պայմանները ա ուստ ջուր խմելու թելադրանքով:

Բացատրուած է պտուղներու բուժիչ յատկութիւնը, որոնց կարգին կիտրոնի, մանտարինի, նարինջի, նուռի օգտագործ ման առաւելութիւններուն մասին: Խնձորը մանաւանդ, որ կենսանիւթերու աղբիւր է ու թարմութիւնը պահող: Մէկ խօսքով ամէն պտուղ իր գոյնին անուշութեան, գեղեցկութեան կողքին ունի բուժիչ յատկութիւն:

Մէկ խօսքով բժշկուհին կը պատմէ յիսունէ աւելի պտուղներու պարունակած վիթամիններու եւ անոնց բուժիչ յատկութիւններուն, որոնք հարուստ են կենսանիւթերով, թուելով 44 բանջարեղէն:

Ապա կ'անցնի հիւթերու օգտագործման, որոնցմէ կը նշէ 17 տեսակ օգտակար մարսողութեան: Իսկ պիտակեղէնները ունին անդային բարձր

### ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

#### ԱՆԱՆԻԱ ՄԱՂԱՔԵԱՆ

Տիեզերքն ու երկիրն ամբողջապես կազմուած են չարի ու բարու համադրութիւնից: Շատերի մօտ միանգամից հարց կ'առաջանայ, թէ այդ ի՞նչ չար բան կարող է ունենալ տիեզերքը: Միանգամից էլ պատասխանեմ. երկրագնդի վրայ կատարուող բազմաթիւ եւ բազմապիսի աղէտալի երեւոյթներ պայմանաւորուած են տիեզերքի անմիջական եւ ոչ անմիջական ազդեցութիւններով: Այդպիսի ցայտուն օրինակներ կարող են համարուել երկնաքերերի անկումը, նորմալից գերբարձր եւ գերցածր ջերմաստիճանների առաջացումը, ցունամիների, հողմերի, մակընթացութիւնների եւ տեղատուութիւնների, հզօրագոյն կայծակների եւ նմանատիպ այլ երեւոյթների առաջացումը երկրի վրայ: Ելնելով այն ելակետից, որ չարն ու բարին ամբողջապէս ծածկուած են երկիրն ու երկիրքը, կը փորձեմ յետագայ ասելիքը կառուցել միայն երկիր մոլորակի կտրուածքով: Այլ խօսքով, չարի ու բարու փոխյարաբերութիւնները կը դիտարկենք մեր առօրեայ կեանքում: Ինչպէս արդէն ասուեց, մարդկային բազմութիւնը փեղկուած է երկու մասի՝ չարի եւ բարու: Միաժամանակ, տարօրինակ է, թէ ինչ ասել է չար, եթէ չկայ բարին եւ հակառակը: Այլ խօսքով, չարն ու բարին մշտապէս փոխադասանաւորուած են միմիանցով եւ մշտապէս որոշակի փոխյարաբերութեան մէջ են: Այժմ ասելի պարզեցնենք եւ յետագայ ասելիքը տանենք մարդու տեսակի կտրուածքով: Երբ ասուեմ է չար մարդ, դա նշանակում է, որ նրա ուղեղը եւ հոգին հիմնականում պատուած են չարութեամբ, որը ոչ այլ ինչ է, քան նախանձ, նենգութիւն, չկամեցողութիւն, որկրամոլութիւն, ազահութիւն, դաւաճանութիւն, շնութիւն ու նմանատիպ այլ յատկանիշներ: Չարմանալ կարելի է չար մարդկանց մտածողութեան վրայ, քանի որ նրանք ամէն ինչից անկախ, շարունակում են իրենց չար գործելածը եւ երբեք իրենց հարց չեն տալիս, լաւ այս ամէնն ինչո՞ւ եւ միչեւ ե՞րբ...: Եթէ նրանք չեն գիտակցում, որ իրենց տրուած կեանքի ժամանակը շատ կարճ հատուած է՝ համարեա ակնթարթ, այդ դէպքում կարելի է մի կերպ հասկանալ ու ներողամիտ լինել, քաղի նրանց ընկալման դաշտը այդպիսին է: Իսկ, եթէ նրանք յստակ հասկանում են, որ կեանքն՝ ընդամէնը մի երկարացուած երազի է նման եւ ոչնչի առջեւ կանգ չառնելով, փորձում են չարութեամբ ոչնչացնել շուրջը եղած ամէն դրականը, դա արդէն անհասկանալի ու լիովին աններելի է: Միթէ՞ դժուար է հասկանալ, որ ուրիշի արեան մէջ թաթախուած՝ մի քանի կտոր ասել ոսկի ունենալը կամ մի քանի կտոր ասելի ուտելիք ուտելը, մեծ հաշուով իրենց ոչինչ չի տալիս: Միթէ՞ այդ մի քանի կտոր փալասփուլուսի դիմաց արժէ ծախել հոգին եւ ուղեղը դնել բազմապիսի լարուածութիւնների եւ հարուածների տակ: Միթէ՞ կարելի է չհասկանալ, որ անկախ ամէն ինչից, ժամանակը մշտապէս եւ անասելի արագութեամբ հոսում է եւ ամէն շարժող վայրկեանը՝ լոկ մի բան է միայն «պարզեւում» մարդուն՝ նրան մէկ վայրկեանով ասելի է

մօտեցնում իր գերեզմանին: Ի վերջոյ, եթէ մարդը չի գիտակցում, թէ իր ապրած կեանքով ուր է գնում, այդ դէպքում ինչպէս պէտք է որոշի, թէ այդ ճանապարհին ինչ քայլեր պէտք է անի: Չէ՞ որ մարդ արարածի կենսաբանական կառուցուածքը բոլորի համար միատեսակ է, այնպէս որ, չար մարդու մէջ նոյնպէս դրուած է որոշակի խիղճ եւ այլ դրական յատկանիշներ, որոնք ցաւօք, նա երբեք չի օգտագործում: Չնայած, մարդ արարածը կամովին է կիրառում իր մէջ եղած յատկանիշները, այնուամենայնիւ հարց է առաջանում, թէ ինչո՞ւ չար մարդիկ՝ գէթ մէկ ակնթարթ չեն մտածում, որ կարելի է այդ դրական յատկանիշներին եւս որեւէ կերպ արձագանքել: Եւ ամենասահականալին այն է, թէ ինչու, ոչ ուրախութիւնը, ոչ էլ տխրութիւնը, այդ մարդկանց մէջ, մէկ ակնթարթ անգամ խիղճ գութ եւ այլ բարի զգացումներ չեն արթնացնում:

Ի վերջոյ, կեանք կոչուածը խարսխուած է մի քանի որոշիչ սրբութիւնների հիմքի վրայ: Չար մարդիկ, իրենց ճանապարհին ոչնչացնում են այդ բոլոր սուրբ արժէքները եւ ամաչութեան վրայով շարժուած առաջ: Այ մարդ արարածներ (ցաւօք, ձեզ նոյնպէս մարդ են անուանում), ի՞նչ էք ուզում այս կեանքից: Ի վերջոյ, ո՞րն է ձեր առաքելութիւնը: Եթէ մարդը չունի այս հարցերի պատասխանները, ապա նրա ապրածը՝ լոկ ունայնութիւն է:

Չար մարդկանց հոգեբանութիւնն ընդհանրապէս անհասկանալի է, քանզի նրան տրուած՝ ակնթարթի տեւողութեամբ ժամանակում, ո՞ւմ եւ ի՞նչ է փորձում ապացուցել: Հետաքրքիր է, եթէ երկրագնդի վրայ եղած ամէն ինչը տան նրանց, այդ քանից յետոյ, նրանք արդեօ՞ք կը գոհանան, գոնէ մէկ ակնթարթ բաւարարուածութեան զգացում կ'ունենան, թէ՞ ոչ: Ուղղակի, պէտք է հասկանալ, որ այս կեանքում մնալուն արժէքները՝ միայն մարդու թողած բարի գործերն են:

Դիմում եմ չար մարդկանց ցաւը մեծ է, քանզի դուք ապրում էք աննպատակ, ապրում էք չար գուրդ տալով միայն պահին: Ձեզ համար յաջորդ վայրկեան չկայ: Դուք մսխում էք վայրկեանը՝ առանց յաջորդ վայրկեանն իմաստաւորելու: Իսկ կեանք կոչուածի միակ իմաստը, ամէն վայրկեան՝ յաջորդող վայրկեանն իմաստաւորելն է:

Ես բոլոր չար էակների համար բարձրաձայնում եմ. ձեր յաջողութիւնը ժամանակաւոր է եւ շատ մի ոգեւորութեամբ, քանզի չափից ասելի ոգեւորութեամբ չեք երբէք լաւ բան չի խոստանում: Յստակ գիտակցելով, որ դուք՝ ամէնուրեք չարութիւն սիւնողներդ, վայրկեան անգամ գոյատեւելու արժանիք չունէք, այնուամենայնիւ բարու կողմից՝ նախ կը լսէք խաղաղուելու եւ ձեր չար մտադրութիւնները կեանքի կոչելու մտադրութիւններից հրաժարուելու յորդորներ եւ դրանք անտեսելուց յետոյ միայն, կը ստանաք ձեզ արժանի հասանելիքը: Չլսուած բան է, որ վերջնական արդիւնքում, չարը՝ յաղթի բարուն: Դա այնքան անհար պատահար է, որքան որ, արեւն սկսի ծագել արեւմուտքից եւ սկսի հակառակ պտտուել...

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒԲԻՉՍ

#### ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Իմ սերունդը մեծացել է մի ժամանակաշրջանում, երբ կենտրոնականների կամ ռազմականների սեւ «24»-երը, նրանց ամառանոցները, «փակ խանութները» եւ այլն իմ շրջապատում քմծիծաղ եւ արհամարհանք էին առաջացնում: Մասնագէտները զբաղուած էին իրենց գործով, միջակութիւնները կոմերտական եւ կուսակցական կարիերա էին անում: Քաղաքականութիւն, ֆո՛ւ, դա նորմալ մարդուն յարիւր գործ է, զգվոտոց, կոռուպցիա, անիմաստ ճառեր՝ պէտք է այդ ամէնից հեռու մնալ, լինել աղքատ ու հպարտ: Այսօր դա, իմ կարծիքով, հնացած մօտեցում է:

Բայց խոստովանեմ, որ չեմ կարողանում իմ մէջ այդ սնուցիչ յաղթահարել. իմ ենթագիտակցական, մեղմ ասած, հակակրանքը քաղաքականութեան նկատմամբ յաղթում է բոլոր տեսակի բանական փաստարկները: Այդուհանդերձ, ուզում եմ հաւատալ, որ յաջորդ սերունդը, որը մեծացել է այլ պայմաններում, չի կիսում իմ հակակրանքը: Այսօրուայ հայաստանեան իրականութիւնը դրա համար առանձնապէս հիմքեր չի տալիս, եւ ասելով՝ «այլ պայմաններ», ես նկատի ունեմ բացարձակապէս ոչ այս Ազգային ժողովը, որի կազմի հիմնական գանգուածը կենտրոնից առանձնապէս չի տարբերուում, ոչ էլ մարդկայնաբանները, որոնք շատ են յիշեցնում ռազմիկները:

Բայց ներկայիս երիտասարդների մի մասն ասելի լայն եւ բազմակողմանի տեղեկատուութիւն ստանալու հնարաւորութիւն ունի, մասնաւորապէս՝ թէ ով եւ ինչի համար է զբաղուած քաղաքականութեամբ զարգացած երկրներում, ինչպէս են աշխատում քաղաքական կարիերա անելու «վերելակները»: Այնտեղ էլ կան լիքը անագնիւ, կոռումպագուած գործիչներ, բայց

հիմնականում չկան տգէտներ, տկարամիտներ, անզբաղստներ: Բացառուած է, որ այնտեղ սիւսլ, պետութեան համար վտանգաւոր որոշում կայացուի պարզապէս այն պատճառով, որ որոշում ընդունողները չունեն բաւարար գիտելիքներ, մտահորիզոն, չեն կարողանում կարգալօրէն քննարկել փաստաթղթերը:

Այնտեղ հնարաւոր չեն այն ծայրայեղ դիւետանտիզմը, պետական խնդիրների մասին կենցաղային մակարդակի դատողութիւնները, որոնք վերջին 20 տարուամբ լսում ենք քաղաքական գործիչներից: Այդ դիտողութիւնները գուրկ չեն գաւառական խորամանկութիւնից, բայց վերջինս չի կարող փոխարինել գիտելիքին ու ինտելեկտին:

Բայց եթէ գործիչներն այդպիսին են, դա դեռ չի նշանակում, որ քաղաքականութիւնն է ինքնին այդպիսին: Յուսով եմ՝ նոր սերնդի մտաւորականները, որոնք չունեն «խորհրդային հետքեր», չեն խորշի քաղաքականութիւնից, կը մտնեն այդ գործի մէջ իրենց նոր, յստակ օրակարգով, ըստ որի (մի՛ գարմացէք) քաղաքականութիւնը հասարակական յարաբերութիւններն աւելի ազնիւ եւ մաքուր դարձնելու միջոց է: Այսօրուայ երիտակուսակցականները, որպէս կանոն, ամբողջութեամբ գտնուում են «աւազ ընկերների» ճնշող ազդեցութեան տակ, բայց համակարգից դուրս եւ տեսնում եմ փայլուն երիտասարդներ:

Դրան գուզահեռ տեղի կ'ունենայ եւս մի կարեւոր բան՝ կը փոխուի մեր վերաբերմունքը հարստութեան եւ հարուստների նկատմամբ: Նրանք այլեւս կը դադարեն լինել ատելութեան եւ նախանձի առարկայ, չեն ընկալուի որպէս ժողովրդին թախանած աւագակներ: Ինձ թւում է՝ մենք կը փոխուենք այն ժամանակ, երբ կը սկսենք ծափահարել նրանց, ովքեր որեւէ որոշում (նաեւ բիզնեսում) յաջողութիւնների են հասել:

### ԻՆՉՈՒ ԶԱՄԱՐ ԴԺՈՒԱՐ Է ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԱՌՆԵԼԸ

Արդի կենցաղը բազմացուցած է այլընտրանքները՝ կեանքի բոլոր մարզերուն մէջ: Չկայ պարագայ մը որ իր այլընտրանքները չունենայ: Մինչ այս երեւոյթը կը դիւրացնէ մեր կեանքը եւ հասանելի կը դարձնէ նախապէս անհասանելի թուացող առարկաներ, ան նաեւ կը դժուարացնէ որոշում առնելու գործընթացը: Իւրաքանչիւր անձ օրական դրութեամբ ստիպուած կ'ըլլայ ընտրել առնուազն երկու այլընտրանքերէն մէկը՝ թէ ո՞ր երթեւեկի միջոցը պիտի օգտագործէ աշխատանքի մեկնելու համար, ո՞ր ուտելիքը պիտի պատրաստէ, ո՞ր կօշիկները պիտի հագնի, ո՞ր եւնամակը առաջնահերթութիւն պէտք է համարէ, ո՞ր շուկան պէտք է երթայ, եւ այլն:

Որոշում առնելու աշխատանքը մաս կը կազմէ մեր առօրեայ կեանքին: Աշխատանքի ընթացքին, ընտանեկան կեանքին մէջ, անձնական կեանքին մէջ միշտ հարցեր գոյութիւն ունին, որոնց լուծումը կը կարօտի պատասխանատուութեամբ առնուած որոշումներու:

Նախքան որոշում առնելը մարդիկ կ'արժեւորեն իւրաքանչիւր այլընտանքի օգուտները եւ վնասները: Հաւանաբար, բոլոր այլընտրանքները ունին օգուտներ եւ վնասներ, սակայն իւրաքանչիւրին պարագային տարբեր է անոնց համեմատութիւնը:

Արժեւորման այս քայլը անհրաժեշտ է որոշում առնելու համար, սակայն միեւնոյն ժամանակ

կը համարուի ամէնէն դժուար եւ ճնշուածացին քայլը: Մարդիկ երբեմն անկարող կը զգան ճիշդ որոշումներ առնելու եւ կը տատամսին հաստատելու իրենց որոշումը:

Հոգեբաններ կը բացատրեն թէ կարգ մը որոշումներ կրնան փոփոխութեան ենթարկել մեր կեանքը, հետեւաբար անորոշ շութեան եւ հաւանական անապահովութեան նկատմամբ վախը կը դժուարացնեն որոշում առնելու ընթացքը: Ինչպէս նշեցինք, իւրաքանչիւր այլընտրանք ունի իր վնասները: Մարդիկ յաճախ պատրաստ չեն ըլլար դիմագրաւելու իրենց որոշումին հետեւանքով զարգացած դժուարութիւնները: Կարելոր է նաեւ իմանալ, որ երբեմն որոշումներ մեզ ետ կը մղեն մեր ներկայ վիճակէն: Այս եւս թոյլ չի տար, որ մարդիկ դիւրութեամբ հաստատեն իրենց որոշումը:

Հոգեբաններ հանրութեան ուշադրութեան կը յանձնեն թէ նման կացութիւններ բնական են եւ կը պատահին բոլորիս հետ: Ճիշդ որոշումներ առնելու համար պէտք է անհատը կարենայ լաւ արժեւորել իր առնելիք որոշումը եւ նկատի ունենայ հիմնական այլընտրանքները: Կարելի է նաեւ խորհրդակցել մտերիմ ընկերներու, ծնողներու եւ հարազատներու հետ, սակայն երբեմն կարծիքներու բազմազանութիւնը կրնայ յաւելեալ շփոթի մատնել մեզ:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

### ԶԱՓԱԶԱՆՑ ԻՆՔՆԱՎՍՏԱՅԻՆ ԿՏԱՆԳԱԻՈՐ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ

Բոլոր ծնողները կը փափաքին, որ իրենց զաւակները ունենան պինդ ինքնավստահութիւն, որպէսզի յաջողին իրենց ուսանողական, ընկերային եւ ապագային՝ աշխատանքային եւ անձնական կեանքերուն մէջ: Ծնողներու կողքին, փոքրերու հետ յաճախակի շփում ունեցող չափահասներ, ինչպէս՝ ուսուցիչները եւս ջանք կը թափեն, որ փոքրերը ինքնավստահ դառնան:

Բոլոր պարագաներուն չէ, որ անոնք կը յաջողին ինքնավստահ դարձնել փոքրերը: Կարգ մը պարագաներուն, մարդիկ նոյնիսկ չափահաս դառնելէ ետք կը մնան անինքնավստահ: Ինքնավստահութեան պակար կրնայ ունենալ չափազանց վատ հետեւանքներ՝ կեանքի բոլոր մարզերուն մէջ: Բաւական դժուար է առանց ինքնավստահութեան ընկերութիւններ մշակել, յաջողութեամբ կատարել աշխատանքները, կարծիք արտայայտել եւ ինքնուրոյն մտածել:

Ինքնավստահութիւնը կրնայ վերիվայրուամեր ունենալ կեանքի ընթացքին: Տարբեր հանգրուաններու պարագային, մարդոց մօտ կրնայ նուազիլ կամ բարձրանալ ինքնավստահութեան աստիճանը: Սակայն, այս չի նշանակեր թէ մարդիկ պէտք է խուսափին յաւելեալ ջանք թափելէ՝ իրենց ինք-

նավստահութիւնը վերականգնելու համար:

Ինքնավստահութեան մշակումը կը սկսի փոքր հասակէն: Չափահասները բնաւ պէտք չէ մտածեն թէ փոքրերու համար անհրաժեշտ չէ ինքնավստահութիւնը, կամ՝ կարելոր հարց մը չէ անինքնավստահութիւնը: Փոքրերը եւս, պատանիներու եւ չափահասներու նման կրնան տառապիլ անինքնավստահութեան հետեւանքով:

Ինքնավստահութիւնը կրնայ նաեւ վերածուիլ ժխտական գործօնի: Բոլոր յատկանիշերու նման, ինքնավստահութիւնը եւս օգտակար է երբ ըլլայ չափաւոր: Չափազանց կամ անիրապաշտ ինքնավստահութիւնը կրնայ նոյնքան հարցեր ստեղծել, որքան ինքնավստահութեան չափազանցութիւնը:

Ըստ հոգեբաններու կատարած նորագոյն ուսումնասիրութիւններուն, փոքրերու եւ պատանիներու մօտ ինքնահավանութիւնը կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ աշակերտներու միջեւ ընկերային յարաբերութիւններու վրայ: Գերմանիոյ մէջ գտնուող Պէմպրլի համալսարանի գիտաշխատողները կը շեշտեն թէ աշակերտներու մօտ անիրապաշտ ձեւով ինքնագերադասումը, որ արդիւնք է չափազանց ինքնավստահութեան, կրնայ մեկուսացնել անհատը:

### ՄԱՐԶԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԶԻՄՆԱԿԱՆ ԽՈՉՆԴՈՏԸ

Բոլոր տարիքներու պարագային, ամէնէն շատ ընդհանրացած որոշումներէն մէկն է կանոնաւոր կերպով մարզանք կատարելը: Ուսումնասիրութիւններու ընթացքին երբ մարդոց հարց տրուի թէ ինչպիսի՞ փոփոխութիւններ կը փափաքին կատարել իրենց առօրեայ կեանքին մէջ, մարզանքը անպայման մաս կը կազմէ այս փոփոխութիւններու շարքին: Իսկ ամանորի սեմին առնուած որոշումներուն մէջ եւս մեծ տեղ կը զբաւէ մարզանքը: Սակայն, հետաքրքրական է այն հակասութիւնը, որ մարզանքը նաեւ ամէնէն քիչ կատարուած վարժութիւններէն մէկն է մարդոց մեծամասնութեան մօտ, որոնք կը փափաքին կանոնաւոր կերպով աշխուժ պահել իրենց մարմինը:

Ժամանակի սակաւութիւնը, զբաղուածութիւնը, յոգնութիւնը եւ այլ գործօններ կրնան դժուարացնել մարզանքի հետեւելու որոշումի ամրապնդումը: Ոմանց համար, քրտնիւլը, տաքնալը, մկաններու ցաւը, անձրեւին տակ քայլելը կրնան արգելք դառնալ կանոնաւոր կերպով մարզանք կատարելու: Հակառակ, որ չկայ մարդ աշխարհի վրայ որ մտահոգուած չէ իր առողջապահութեամբ, քիչ են այն մարդիկ որոնք իսկապէս ջանք կը թափեն իրենց մարմինը աշխուժ պահելու համար:

Մարդկային վարմունքի տեսութիւններու համաձայն՝ մարդիկ հակամէտ են նախընտրելու ներկայ պահի հանգստութիւնը քան ապագայի հանգստութիւնը, որ կը պահանջէ գիջումներ կատարել ներկայ

պահուն: Նոյնիսկ երբ մարդիկ վստահ ըլլան թէ ներկայ ժամանակ քիչ մը անհանգստանալը կրնայ ապագային ուրախութիւն պատճառել իրենց, դժուար է, որ որոշում առնեն գիջելու իրենց հանգստութիւնը՝ շնորհիւ ապագային:

Այս տեսութիւնը կը բացատրէ հարցին մէկ մասը: Վերոյիշեալ տեսութեան կողքին, գոյութիւն ունի նաեւ այլ գործօն մը, որ կը հանդիսանայ հիմնական խոչընդոտը՝ մարմինը աշխուժ պահելու ծիրին մէջ: Ըստ հոգեբան՝ Շերի Բակոթոյի մարզանք կատարելու ամէնէն դժուար հանգրուանը մարմինը իր հանգստութեան վիճակէն դուրս հանելու աշխատանքն է: Ինչպէս, որ մարդիկ դժուարութիւններ կ'ունենան փոփոխութիւններ կատարելու իրենց կեանքին մէջ, նոյն տրամաբանութեամբ անոնց համար նաեւ դժուար է փոփոխութեան ենթարկել մարմնի ընթացքը:

Մարզանքի ընթացքին մարմինը իր բնական ընթացքէն դուրս ելլելով՝ կը յոգնի եւ երբեմն կը տառապի: Իսկ մարզանքին յաջողող մկանային ցաւերը կրնան կարգ մը մարդիկ հեռու պահել մարզանքէն: Սակայն, երբ մարզանքը վարժութիւն դառնայ, բնականաբար կը սկսինք կեդրոնանալ անոր դրական հետեւանքներուն վրայ: Նկատի ունենալով, որ բոլորս կը փափաքինք առողջ մարմին եւ առողջ միտք ունենալ, նախնական հանգրուաններուն քիչ մը նեղանալով մարզանքը մեր առօրեային մէջ ընդգրկելը կրնայ ամէնէն մեծ յաղթանակներէն մէկը ըլլալ:

### ԱԼՔՈՒԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ ԱՌԿԱՅ ԵՆ ՄԻԱՅՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՄՕՏ

Ալքոլ պարունակող խմիչքները ստեղծուած են հազարաւոր տարիներ առաջ, երբ առաջին անգամ ըլլալով մէջտեղ եկած է մարդ արարածի քաղաքակրթութիւնը: Գինին եւ զարեջուրը ամէնէն հին ալքոլ պարունակող խմիչքներն են: Ալքոլի մասին ստեղծագործած են բազմաթիւ մտաւորականներ եւ բանաստեղծներ՝ յատկապէս արաբական գրականութեան մէջ: Ալքոլը շարունակած է մաս կազմել մարդոց առօրեայ կեանքին եւ անհրաժեշտութեան վերածուած է տօնակատարութիւններու, ուրախութեան եւ սուգի կամ տխրութեան պարագաներուն:

Ալքոլի չափազանց սպառումը բաւական վտանգաւոր է առողջութեան: Պատանիներու մօտ ալքոլի սպառումը կրնայ ազդել ուղեղի բջիջ ներուն վրայ: Իսկ չափահասներու մօտ՝ ալքոլի չափազանց սպառումը կրնայ վնասել ստամոքսին, երիկամներուն, լեարդին եւ ուղեղին: Միկրէնի գլխացաւերէ տառապող մարդոց պարագային՝ գինին կրնայ սաստկացնել գլխացաւերը: Յոռեզոյն պարագային՝ ալքոլի չափազանց եւ յաճախակի սպառումը կրնայ վերածուիլ մոլութեան, որ կրնայ խախտել կեանքի առողջ ընթացքը:

Ալքոլի հետեւանքները նուազեցնելու համար, պետութիւնները որդեգրած են յատուկ օրէնքներ: Օրինակ, կարգ մը երկիրներու մէջ ալքոլի օգտագործման նուազագոյն տարիքն է 21-ը: Սակայն, կարելոր է նաեւ անդրադառնալ ալքոլի օգուտներուն: Ըստ բազմաթիւ հետազոտութիւններու, ալքոլի չափաւոր սպառումը կրնայ դրական ազդեցութիւն ունենալ թէ՛ կիներու եւ թէ՛ տղամարդոց առողջու-

թեան վրայ: Ալքոլի չափաւոր սպառումը կրնայ նուազեցնել սրտանոթային հիւանդութիւններու հաւանականութիւնը, ինչպէս նաեւ՝ կրնայ զօրացնել բորբոքումներու դէմ մարմնի դիմադրողականութիւնը: Գինին օգտակար է արեան շրջագայութեան եւ արեան ճնշումի կանոնաւորումին:

Ի դէպ, չափահաս կիներու պարագային ալքոլ պարունակող խմիչքներու չափաւոր սպառումը համագոր է օրական մէկ գաւաթի, իսկ տղամարդոց պարագային՝ երկու գաւաթի: Վերջերս գիտնականներ հետաքրքրական յայտնաբերում կատարած են ալքոլի խմիչքներու առողջապահական օգուտներու տարողութեան գծով: Շուէտացի գիտնականներու կողմէ կատարուած հետազոտութիւնը մը տարրուած է թէ ալքոլը կրնայ նպաստել մարդոց միայն 15 առ հարիւրին՝ չափաւոր քանակով սպառումի պարագային: Շուէտացի հետազոտները իրենց այս ուսումնասիրութիւնը հրատարակած են Alcohol մասագրին մէջ: Հետազոտութեան մաս կազմած են 618 անձեր, որոնցմէ 453-ը տղամարդ են:

Գիտնականները այս երեւոյթը կը բացատրեն ըսելով, որ ալքոլէն օգտուելու համար մարդոց մօտ պէտք է գոյութիւն ունենան ծինային յատուկ փոփոխակներ: Երբ այս փոփոխակները բացակայ ըլլան, մարդիկ չեն օգտուիլ ալքոլ պարունակող խմիչքներէն: Այս ուսումնասիրութիւնը ամբողջական չէ եւ գիտնականներ տակաւին կը շարունակեն արդիւնքներուն գծով նոր փաստեր յայտնաբերել: Մինչ ուսումնասիրութեան աւարտը՝ վայելցէք ձեր գինիի բաժակը:

**ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ**

Տիրբան Սարաֆեանի մեծարման եւ իր երկարամեայ գործունէութեան գնահատման յատուկ առիթով, Տէր եւ Տիկին Վարդիվառ Անթոսեան կը շնորհակարան մեծարեալի ընտանիքը, զաւակները եւ Հ.Մ.Մ.ի մեծ շրջանակը, մաղթելով ընկերոջ առողջութիւն եւ արեւշատ օրեր: Առ այդ կը նուիրեն 100 տոլար Մասիսին:

### ՍԱՐԱՁԴ



ԱՐՈՒՍԵԱԿ ԱՂԱԽԱՆԵԱՆ  
(Ծնեալ Չարմըհալ 1929-ին)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին ԱՐՈՒՍԵԱԿ ԱՂԱԽԱՆԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 28, 2014ին:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, Դեկտեմբեր 4ին, 2014 Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Կարմիր եկեղեցւոյ մէջ, ապա թաղումը նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներն են՝

Ջաւահիրը՝

Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Ժամէն Աղախանեան եւ զաւակները:

Տիկ. Ժէնիկ Աղախանեան եւ զաւակները:

Տէր եւ Տիկ. Վահիկ եւ Դիանա Աղախանեան եւ զաւակները:

Եւ համայն Աղախանեան, Էսքանդարեան, Խաչատուրեան, Դաւիթեան եւ Իւսէֆեան ընտանիքները:

### ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԱՂԱԽԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հայ Ամերիկեան Խորհուրդի անդամները իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն, մասնաւորաբար՝ իրենց ատենապետին՝ Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Քրիսթին Խաչատուրեանին:

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

Հնորհաւորական խօսքեր ձաշկերոյթի յանձնախումբի գոյգ ատենապետներէն, ԱՀԱԸ-ի նախագահ՝ Դոկտ. Ճօ Ջէրօմեանէն, Հայկազեան Համալսարանի Վարչական Խորհուրդի նախագահ՝ Տօքթ. Անի Տարազեանէն, ինչպէս նաեւ Սթիվըն Փիլիպոսեան Հիմնադրամի Խորհուրդէն, նաեւ նուիրատուներու եւ Յանձնախումբի անդամներու ցանկերը:

Երաժշտական յայտագրով հանդէս եկաւ երգչուհի ձիւլիա Մէթըլըր, Վիքթորիա Սիմոնեանի դաշնակի ընկերակցութեամբ, եւ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի օրհներգները հրամցուեցան Ռաֆֆի Գերպապեանի կողմէ:

Միացեալ Նահանգներու Հայ Աւետարանական Միութեան Նախագահ՝ Վեր. Ռան Թովմասեան յանուն Միութեան իր շնորհաւորական խօսքը ուղղեց: Ապա խօսք առաւ Յովնան Արքեպիսկոպոս Տէր-տէրեան, որ քանի մը ժամ առաջ ժամանած էր Հայաստանէն: Արեւմտեան Թեմի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին կողմէ ան շնորհաւորեց Դոկտ. Աղապապեանը եւ Պրն. Ֆիլիպը իրենց ընծայուած այս պատիւին համար, եւ բարձր գնահատեց այս գոյգ հաստատութիւններուն մատուցած ծառայութիւնները Հայ ազգին՝ ամենուրեք:

Յատուկ պատուոյ գիրքեր ներկայացուեցան Դոկտ. Աղապապեանի եւ Պրն. Ֆիլիպսի, որոնց կողակիցները՝ Էլիզապէթ եւ Սիւզի, հիմնադիր անդամներն են Լոս Անճէլըսի Հայկազեան Համալսարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ ԱՀԱԸ-ի Մանուկներու եւ Որբերու Յանձնախումբին, ուր կը շարունակեն ծառայել մինչեւ այսօր: ձաշկերոյթէն գոյացող աւելի քան 400,000 տոլարի հասոյթը պիտի յատկացուին աւետարանչական եւ կրթական կարեւոր բարենպաստակ ծրագիրներու:

Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը՝ հիմնուած 1918-ին, միշտ կատարած է գերազանց աշխատանք իր աշխարհատարած գործունէութիւններուն մէջ, որոնց կարգին են Հայկազեան Համալսարանը եւ Հայաստանի Խորէն եւ Շուշանիկ Աւետիսեան Վարժարանը եւ Համայնքային Կեդրոնը:

Հայկազեան Համալսարանը՝ հիմնուած 1955-ին, կը հրամցնէ տարբեր դասանիւթեր տասնեակ մը մասնագիտութիւններու մէջ: Համալսարանէն շրջանաւարտներ կը վկայուին Պասկաւոր եւ Մագիստրոս աստիճանի տիտղոսներով: Հայկազեան Համալսարանը, միշտ հաւատարմով որ ուսումը երբեք վերջ չունի, կը հրամցնէ նաեւ դասընթացքներ իր Շարունակական Կրթութիւն Կեդրոնի միջոցով:

### ԲԺՇԿՈՒՅԻ ԳՈՅԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՏՔՆԱՆՔԸ

Շարունակուած էջ 16-էն

արժէք: Տրուած 8 տեսակ: Կարելոր են նաեւ ընդեղէնները: Կանցնի հացազգիներուն, համեմուքներուն, կանաչ առողջապահութեան, կաթնեղէններուն, մսամթերքներուն, բուսական իւղերուն, կենսանիւթերուն:

Նաեւ բուժական ոչ-աւանդական մեթոտներուն, նաեւ ժողովրդական բժշկութեան: Մէկ խօսքով այն բոլորը, որ առողջ կը պահէ մարդը: Այս գիրքին ընթերցումը առողջ կը պահէ ձեզ: Ուրեմն կ'արժէ կարդալ բժշկուելիս այս գիրքը առողջ մնալու համար:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Աջապահեան ընտանիքը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր անոնց որոնք իրենց ցաւակցութիւնները յայտնեցին ներկայութեամբ, հեռաձայնով, հեռագրով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆԻ մահուան տխուր առիթով: Այս առիթով փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կատարուեցան «Մասիս» շաբաթաթերթին, որոնց համար շնորհակալութիւն կը յայտնէ վարչութիւնը:

Ստորեւ կու տանք ցանկը բոլոր նուիրատուներուն	
Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրօղլեան	\$1000
Տէր եւ Տիկ. Տիրան ձէրէճեան	\$500
Տէր եւ Տիկ. Վիգէն Մանկրեան	\$500
Տէր եւ Տիկ. Կիւրեղ Մանկրեան	\$500
Սահակեան Սանուց Միութիւն	\$500
Տէր եւ Տիկ. Հէրի Տիրամերեան	\$500
Սարգիս Անուշավաճառ	\$250
Տօքթ. եւ Տիկ. Համօ Մաթոսեան	\$200
Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան	\$200
Սահարա ճաշարան	\$200
Տէր եւ Տիկ. Յարութ Աճէմեան	\$200
Տէր եւ Տիկ. Գալուստ Տէրտէրեան	\$200
Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան	\$200
Տէր եւ Տիկ. Վիգէն Խաչոյեան	\$200
Տէր եւ Տիկ. Գրիգոր Գալաջեան	\$150
Տօքթ. եւ Տիկ. Արշակ Գազանճեան	\$100
Տօքթ. եւ Տիկ. Համբիկ Սարաֆեան	\$100
Տիար Ալպերթ Մինասեան	\$100
Տէր եւ Տիկ. Պետիկ Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Պենոն Կարապետեան	\$100
Տէր եւ Տիկ. Տիրան Սարաֆեան	\$100
Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան	\$100
Տէր եւ Տիկ. Կէրի Սինանեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Խաչոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Մարգարեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութ Պոյամեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութ Ֆուտուլեան	\$100
Տէր եւ Տիկ. Յարութիւն Այվազեան	\$100
Տէր եւ Տիկ. Հէրի Վարդանեան	\$100
Տէր եւ Տիկ. Հրաչ Մարգարեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժողէֆ Գալանճեան	\$100
Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Գէորգ Իսգէնեան	\$100
Տէր եւ Տիկ. Գէորգ Գալուստեան	\$100
Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր Գրիգորեան	\$100
Տէր եւ Տիկ. Ռաքի Ալքատում	\$100
Տէր եւ Տիկ. Սամուէլ Ալաճաճեան	\$100
Տիար Սարգիս Շիրինեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Տեփոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Գոճապապեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրօղլեան	\$100
Տէր եւ Տիկ. Ոսկեբերան Ղազարեան	\$100
Տէր եւ Տիկ. Փանոս Այվազեան	\$100
Տիկին Մէկի Իլանճեան	\$100
Տօքթ. եւ Տիկ. Գուրգէն Մաթոսեան	\$100
Տիար Նազարէթ Գեւորեան	\$100
Տէր եւ Տիկ. Ներսէս Պէրպէրեան	\$100
Արլէն Եփրեմեան	\$100
Տէր եւ Տիկ. Ալէն Սեմերճեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժիրայր Պոյաճեան	\$100
Տէր եւ Տիկ. Ժէք Գազանճեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Անդօ Շահինեան	\$50
Տէր եւ Տիկ. Աւօ Ղարիպեան	\$50
Տէր եւ Տիկ. Խաչիկ Շահինեան	\$50
Տէր եւ Տիկ. Կարօ Ղարիպեան	\$50
Տէր եւ Տիկ. Լեւոն Ղազարեան	\$50
Տէր եւ Տիկ. Մանուէլ Գաֆարտեան	\$50
Տէր եւ Տիկ. Ներսէս Պալաչեան	\$50
Տէր եւ Տիկ. Նորայր Խաչատուրեան	\$50
Տէր եւ Տիկ. Սարգիս Պալապանեան	\$50
Տէր եւ Տիկ. Յարութիւն Սողոմոնեան	\$50
Տիար Գրիգոր Պիլանճեան	\$50
Տիար Մկրտիչ Յակոբեան	\$50
Տիկ. Շաքէ Առաքելեան	\$40
Տէր եւ Տիկ. Յակոբ Աճէմեան	\$40
Տիար Յովիկ Զիլիֆեան	\$40
Սաթենիկ Լալիկեան	\$25

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
 SERVING BATON ROUGE SINCE 1979

